

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱ ԱՆ

## ՀԱՆԳՐՈՒԱՆԷ ՀԱՆԳՐՈՒԱՆ

Մեր ապրիլ 15ի թիւին առաջին յօդուածը կը վերջացնէինք հետեւեալ սողերով, « Հիմակ Ռուսիա հասած է հանգրուանի մը ուր հաւանօրէն քիչ մը հանգիստ առնելու պէտքը պիտի գտայ, նոր արշաւանքներու համար ճամբայ ելլելէ առաջ » Պետութեանց ներքին գաղանիքները անոնց առանձնաձևորէն սեփականութիւններն են. ոչ ոք կրնայ դրապէս բնիկ թէ՛ ինչ կը պատրաստուի արտաքին պաշտօնատան մը գիւանին մէջ: Մեծատաղանդ քաղաքագէտները իրենք ալ շատ անգամ անկարծականին հետ պէմ առ գէմ կուզան. նախահոգակ իմաստութեամբ առաջացի վեր պատրաստուած բոլոր ծրագիրները մէկ ակնթարթի մէջ կրնան վտանգուիլ, ինչպէս ճակատամարտի դաշտին վրայ զօրավարի մը ռազմայարդարութիւնը ելլելէ կը խանդարուի դէպքէ մը, բնութեան մէկ արկածէն. անձքն մը կրնայ ամէն հաշիւ տակնուվրայ ընել: Միջազգային դիւանագիտութեան հեռատեսութիւնը նախատեսած չէր թրանսլաալի ընդդիմադրութիւնը, որուն հետեւանքները Անգլիան կը շղթայեն իր շարժումներուն մէջ:

Դիպուածը, անսպասելին որքան որ ալ ազդեցիկ ըլլան ազգի մը քաղաքականութեանը վրայ բայց եւ այնպէս հիմնովին յեղաշրջում առաջ չեն բերեր. մեծ ազգերը կը շարունակեն իրենց ընթացքը դէպի կէտ նպատակի մը. մերթ կանգ կ'առնեն, մերթ խոտորնակի ճամբայ մը կը մտնեն, մերթ կը սրբազրն իրենց ուղեցոյցը սրպէս գի խոյս տան վտանգաւոր հանդիպումներէ, և սակայն միշտ կը յառաջանան: Ահա Գերմանիա շարունակ կը բարգաւաճի: Անգլիա աշխարհակալութիւն աշխարհակալութեան շղթա կը բարդէ, Ռուսիա միշտ կ'ընդարձակի, միշտ սերբագրելով իրենց յատակագիծը, ըստ պարագաներու պահանջման: Ընդհանուր կարծիք մը կայ թէ Ռուսիա թիւրքիոյ դէմ առելի արդիւնաւորապէս գործելու համար, ինք քիչ մը շունչ առնելու պէտքը պիտի գտայ, բայց անշուշտ պիտի չմտաբերէ թիւրքիոյ շունչ առնել տալ: Կամայով կամացով պիտի պատրաստէ նոր թակարդներ

որ մը նորէն թիւրքերը յանկարծակիի բերելու համար, ինչպէս յաջողեցաւ Փոքր-Ասիոյ երկաթուղիներու գործին մէջ:

Մենք ինչ պիտի կրնանք ընել այս ժամանակամիջոցին. ինչ միջոցով պիտի կարողանանք պարագաներէն օգտուիլ, պնշտպանել մեր ազգային շահերը, բարելուել ներկանիս եւ փրկել հայ ազգութեան ապագան: Այս հարցումին պատասխանելու համար հետեւեալ ենթադրութիւնը ընենք:

Համարինք թէ հայ մը 1890ին սկիզբները գիտական խնդարիկութիւններու առաքելութեան մը մասնակցելով խաւարակուն Ափրիկէի խորքը գացած ըլլար եւ հիմա վերադառնար: Ինչ աներակայելի փոփոխութիւն մը պիտի գտնէր հայ ազգին վիճակին մէջ: Մեկնած պահուն ետին կը թողուր հայ ժողովուրդ մը որ թէև թիւրք իշխանութենէն դժգոհ բայց համբերող ոգով կ'ապրէր, հիմնական բարեկարգութեանց համար Եւրոպայի վրայ յուսադրութեամբ. թիւրք իշխանութիւն մը՝ որ ամէն ջանք ի գործ կը դնէր իր վարչութեան վատթարութիւնը Եւրոպայի աչքէն սքողելու. Եւրոպա մը՝ որ միջազգային գաշնագիրներու զօրութեամբ Գոնէն կը պահանջէր անոր հայ հպատակներուն բնակած երկրին վարչական դրութեան վերանորոգումը: Եւ ահա այդ հայը տասը տարի ետքը երբ Եւրոպա կը վերադառնայ, շուարած կը մնայ. ինքզինքը բոլորովին նոր աշխարհի մը մէջ կը կարծէ զրտնել, կամ թէ հին աշխարհի մը մէջ. 19րդ դարը չէ որ կը վերջանայ, այլ 16րդ դարը: Հայաստան՝ աւեր ու անբակ, բիրտուր դիակներով ծածկուած. թիւրք իշխանութիւնը իբր թէ իր զօրութեան գաղաթնակէտը գտնուած ըլլար, անպատկառօրէն կ'արհամարհէ Եւրոպայի հանրային կարծիքն ու զգացումը. Եւրոպա՝ այլ ևս չուզեր յիշել հայկական ինդիք մը եւ անոր լուծմանը համար ըստանձնած պարտականութիւնները: Այդ հայը եթէ ազգասէր մըն է, եւ հետաքրքրուող ու խորհելու ալ ընդունակ մտքով օժտուած, պիտի ուզէր մանրամասնօրէն իմանալ, զիտնալ տասը տարուան պատմութիւնը, և փընտոնել, հասկնալ այս լեղաշրջման պատճառները: Խուզարկուն Ափրիկէի խորը տասը տարի ո՛չ թերթ կարգացեր է, ոչ նամակ ստացած. իր միտքը կոյս է, ո՛ր եւ է նախապաշարումէ զերծ. կերք չունի, վասն զի դէպքերու

անմիջական ազդեցութեան ներքե չէ գտնուած: Պաղ ա-  
րինով մը պիտի սկսեր տասը տարուան հրատարա-  
կութիւնները կարգալ, իրողութիւնները քննել. դէպքե-  
րու պատճառները փնտռել, եւ յանգիլ որոշ եզրակացու-  
թեանց: Այդ հայը իր ազգին խելացի խորհրդականը  
պիտի ըլլար: Եթէ գոնէ շափաւոր թուով հայեր կարե-  
նային մեր այս ենթադրած տիպարին նմանութիւնը ի-  
րենց անձին վրայ բերել, ու ժողովուրդն ալ մեծամասնու-  
թեամբ անոնց ձայնին մտիկ ընէր, կը հաւատանք թէ  
հանգրուանը ուր ժամանած է Ռուսիա, եւ ուր ատեն մը  
հանգրստ առնելու պէտքը կը զգայ, այդ հանգրուա-  
նէն նոր գարագուռն մը կը սկսի Հայութեան համար:

Երբ Նոր-Կեանքը հիմնելու որոշումը տրուեցաւ, մեր  
ծրագրին զուտը դրինք՝ իրականութեան ուսումնասիրու-  
թիւնը: Հայ ժողովրդին փրկութիւնը յուսալու համար  
պէտք էր նախ եւ առաջ զինքը իրական աշխարհին հետ  
զէմ յանդիման բերել: Թիւրքիոյ Հայութիւնը իր վիճակին  
բարւոյցմանը համար յոյսերուն մեծ մասը Եւրոպայի  
վրայ գրած էր, առանց Եւրոպայի վրայ ո՛ր և է գաղափար  
մը կազմած ըլլալու: Քաղաքական դաստիարակութիւն-  
նիս շատ տկար է, կրնանք ըսել՝ ոչինչ, մինչդեռ աչքերնիս  
Եւրոպայի յառած, մեր փրկութիւնը կը սպասենք քաղա-  
քական միջամտութենէ: Հարկ էր Հայ ժողովրդին մա-  
տակարարել այն նախնական բոլոր նիւթերը որոնց վրայ  
խորհելով կամաց կամաց իր քաղաքական դաստիարա-  
կութիւնը պիտի շինէր: Նոր-Կեանքի առաջին թիւէն  
սկսած միշտ պարզեցինք Արևելեան Խնդրի մասին Եւ-  
րոպայի էն հիդինակաւոր անուններու, հանդէսներու, օ-  
րագիրներու գաղափարները: Այդ բոլոր հրատարակու-  
թիւններէն Հայ ազգը կը տեսնէ թէ հայկական բարե-  
նորոգումներու գործը շատ պարզ, առանց կնճռոտու-  
թեան խնդիր մը չէ: Հայաստանը աշխարհէ անջատուած  
կղզիի մը չնմանիր. ընդհակառակը, իր աշխարհադրական  
դիրքը կենսական կարևորութիւն ունի աշխարհի համար:  
Ու շա՛տ ծանր, շա՛տ մեծ գործ մըն է հայկական խնդրին  
զեկալարութիւնը:

Ուրիշ առթիւ ըսած ենք. հայ ազգը շունենալով միակ  
զեկալարիչ միտք մը, չվայելելով Արտաքին գործոց պաշ-  
տօնատան մը վերին եւ գերագոյն տեսչութիւնը, Հայ  
ժողովուրդը ինքն է իր արտաքին գործերու նախարարը:  
Հայ ազգին գոնէ մէկ մասը պէտք է ըստ բաւականին  
բանգէտ ըլլայ որպէս զի առողջադատ հանրային կար-  
ծիք մը գոյանայ, եւ ազգը առանց լաւատես կամ յոռե-  
տես ինքնախաբէութեան զոհուելու, կարենայ իր ապագան  
պատրաստել: Մինք որ ուշադիր կը հետեւինք հանրային  
մտքին փոփոխութեանց զանազան երեւոյթներուն, կը  
զիտենք թէ հայ ազգին մտածելու եղանակը զգալապէս  
կը բարեփոխուի: Հայ ժողովուրդը այս մասին շատ բան  
պարտական է արտասահմանի թրքահայ թերթերու կա-  
րևոր մէկ մասին իրականասէր ուղղութեանը: Հայը այլ  
եւս Եւրոպայի քաղաքականութիւնը իր ուզածին պէս չի  
չափեր, չձևեր, տրամադիր չէ հաւատալու որ Հայաս-

տանը լոկ Եւրոպայի միջամտութեամբ շուտով ինքնա-  
վար պիտի հռչակուի, ինչպէս որ մենք կուզենք: Բայց  
նմանապէս չէ յուսահատած թէ այսքան աղէտներէ յե-  
տոյ այլ եւս Հայաստանի բարւոյցումը անկարելիութեանց  
կարող անցած է: «Ինչո՞ւ» փնտռելու, քննելու, հաս-  
կնալու ետեւէ ինկած է հայ ժողովուրդը: Ո՛չ հրաբորբոք  
լաւատեսութիւն, ո՛չ սեւամաղձ յոռետեսութիւն:

Լաւատես ինքնախաբէութիւնը որքան որ վնասաբեր  
է ժողովրդի մը համար այնքան ալ վտանգաւոր է յոռե-  
տես ինքնախաբէութիւնը: Հայ ազգը այսօր կը նմանի  
հիւանդի մը որ շատ ծանր, գրեթէ մահամերձ վիճակի  
մը հասնելէ յետոյ կը սկսի առողջանալ եւ կամաց մամաց  
կազուրիւ: Իր բժիշկը, իր ընտանիքը, իր բարեկամները  
շատ զէշ խրատ տուած կ'ըլլան և մինչեւ իսկ մահուանը  
պատճառ կը դառնան եթէ յորդորեն անիկայ քաջառողջի  
մը պէս ապրիլ, պաղէն, ցուրտէն չզգուշանալ, եւ ընել  
ինչ որ իրեն հաճելի կը թուի: Մահուանը պատճառ  
կ'ըլլան նաև երբ յայտարարեն թէ՛ ինչ որ ալ ընէ յոյս չի  
կայ, պիտի չառողջանայ, մահուան դատապարտեալ մըն  
է: Ո՛րքան մարդիկ վաղամեռ կը վախճանին, պարզապէս  
անոր համար որ խանգարուած երևակայութեամբ ինք-  
զինքնին անբուժելի հիւանդութեամբ վարակուած կը կար-  
ծեն: Այս պարագային մէջ ազգերն ալ կը նմանին ան-  
հասներու. անգամ մը որ սեւ մաղձը իրենց մտքին յըս-  
տակութիւնը պղտորէ, այլ ևս կարստի անզունդին բո-  
լորաթիւր կը խարխաբեն, մինչև որ հոն գահավիժին եւ  
անհետին:

Ճշմարտութիւնը ստուգօրէն զիտնալու մէջ է փրկու-  
թեան միակ պայմանը անոնց հավար որ վտանգաւոր  
բայց ոչ յուսահատական կացութեան մէջ կը գտնուին:  
Հիմակ բժշկութիւնը այլ եւս օգտակար չհամարիր հիւան-  
դէ մը ծածկել իր ախտին բնոյթը. մինչեւ իսկ թոքախ-  
տաւորին կ'իմացնեն հիւանդութեանը ինչ ըլլալը: Ստու-  
գութիւնը զիտնալով է որ հիւանդը զգուշական բոլոր  
միջոցները ձեռք կ'առնէ, տրուած պատուիրանները  
ճշգրտութեամբ կը գործադրէ, կարգ կանոնի կը հնազանդի,  
որով հնար եղածին չափ կեանքը կ'երկարէ, ու թերեւս  
կ'առողջանայ իսկ:

Ահա այդ դրութեան հետևութեամբ է որ այս էջերուն  
մէջ կը պարզուին մեր ազգային շահերուն հետ սերտ ա-  
ռնչութիւն ունեցող քաղաքական և պատմական տեղե-  
կութիւնները եւ տեսութիւնները: Արևելեան խնդիրը փոքր  
Ասիոյ երկաթուղիներու մենաշնորհմանց միջոցաւ մտաւ  
նոր բուլի մը մէջ, եւ Ռուսիա կ'ուզէ տէրը մնալ  
Թիւրքիոյ գլխուն վրայ: Իր նպատակներուն իրականաց-  
մանը համար Ռուսիա Թիւրքիոյ դէմ փոխանակ ակներեւ  
կերպով կուող քաղաքականութեան մը հետեւելու պիտի  
ուզէ գաղտնաձայնով միջոցներով մարանչիլ, ինչպէս  
այս վերջին տասը տարիներու մէջ ըրաւ, եւ յաջողու-  
թեան համար համբերութիւն եւ ժամանակ պէտք է: Հա-  
յոց խնդիրները առաջնակարգ զեր մը պիտի կատարեն  
այդ նոր քաղաքականութեան մէջ: Կ. Պոլսէն հետզհետ է

հասած լուրերը կը հաւաստեն թէ ուսական զեսպանա-  
տունը հիմակ սկսած է մասնաւոր ուշադրութեամբ հայ-  
կական գործերով զբաղիլ: Դեսպանը, Պ. Չինովիէվ, ան-  
ձամբ Օրմանեան Պատրիարքին բնակարանը կ'երթայ եւ  
օրուան ընթացիկ խնդիրներուն վրայ տեղեկութիւն կը  
ստանայ և խորհրդակցութիւններ կը կատարէ: Մեր խընդ-  
րին համար Ռուսիոյ այս հետաքրքրութեան նշանները  
շատ ուշադրաւ համարելու իրաւունքը ունինք: Մեր  
վերջին քսան տարուան պատմութիւնը, որուն զխաւոր  
զուտները այս էջերուն մէջ միշտ կը հրատարակուին, կը  
հաստատեն թէ Ռուսիա ըստ իր շահերուն պահանջմանը  
մեր դատին մերթ բարեկամն է մերթ հակառակորդը: Մի-  
այն թէ մինչեւ այսօր շատ յստակօրէն տեսանք որ բա-  
րենորոգումներու պահանջում, կոտորած, աւերում, թա-  
լան, տարագրութիւն, վերջապէս մեր կրած բոլոր ազէտ-  
ները ինչ շահեցուցին Ռուսիոյ, բայց թէ մեզի ինչ շո-  
շափելի բարիք արտադրեցին, այդ դեռ ակնհեր շտեմնութիւն:  
Հայոց արիւնը Հայոց արտերը պիտի ոտուկը եւ արգա-  
սարբը ընեն, Ռուսիա յաջողեցաւ շուրջ ճամբէն շեղե-  
ցնել եւ իր արտը դարձնել:

Այս անցեալը մեր վրայ պարտականութիւն կը ծան-  
րացնէ ամենամեծ զգուշաւորութեամբ եւ խոհեմութեամբ  
շարժելու: Ինչպէս ըսինք, հայ ժողովուրդը ինքն է իր  
արտաքին գործերու նախարարը, ուրիշ ոչ ոք. ուստի ա-  
մէն մէկ հայ ջանալու է որ ինքը չխաբուի, և չխաբուելու  
համար պէտք է ո՛չ բռնկիլ, ո՛չ ալ սմբիլ, այլ միշտ կորո-  
վալի մնալ, դիտել, սորվիլ, քննել, խորհիլ, և գործել:

Քսան տարի է որ հայկական խնդիրը եթէ զխաւորա-  
պէս նպաստաւորեց ուսական շահերը, բայց նուազ ծա-  
ռայութիւն չմատոյց նաև սորիշ պետութեանց ալ: Ահա  
տեսանք որ Գերմանիա սուլթանը իրեն ստրկացուց յատ-  
կապէս հայկական կոտորածները իրեն զէնք ընելով, եւ  
չնորհիւ այն սարսափին գորագրեց, Գերմանիա կարող եղաւ  
Պաղատաի երկաթուղիին մենաշնորհը ստանալ: Տասնը  
հինգ տարի առաջ ալ երբ Անգլիա տակաւին Եգիպտոսի  
տէրը եղած չէր վերջնականապէս, հայկական խնդիրը իբր  
զէնք կը գործածէր Թիւրքերը վախցնելու համար: Ամէն  
անգամ որ սուլթանը նոր բարոց մը կուզէր ընել կամ ուրիշ  
պետութեան մը աջակցիլ ընդդէմ Եգիպտոսի անգլիական  
գրաւման, Անգլիոյ զեսպանը անմիջապէս վազն ի վազը  
շունչը Դուրը կ'առնէր եւ Պերլինի ՅԱրդ յօդուածին շու-  
տափոյթ գործադրութիւնը կը պահանջէր. ու սուլթանն  
ալ դող ելած, ձայնը քաշելով տեղը կը նստէր:

Ինչ որ եղած է ա՛լ ետ չդառնար. բայց գոնէ ասկէ  
հտքը չշարունակենք նմանիլ համբաւաւոր առակին որուն  
մէջ ընտանեակը անասունը իր թաթիկները կ'երէ շագա-  
նակը կրակէն հանելու համար, որպէս զի կ'ապիկը զայն  
անուշ ընէ: Միւր թաթիկները չեն միայն որ երեցան, այլ  
մեր հօգին ալ: Գոնէ ցաւը, զոր չենք ժողովար, մեզի զգու-  
շաւոր եւ հեռատես ընէ:

ԿՈՎԿԱՍՏԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Երկու Բաղաբարթութիւնները» յօդուածին մէջ  
տեսնուեցաւ թէ Կովկասի այլազան ցեղերը, որոնցմէ  
իւրաքանչիւրը երբեմն ինքնազուտն ապառաժի մը պէս ու-  
րոյն կեանքով կ'ապրէր, ա՛լ հիմա դարբուր հետ ընդհա-  
րուած բեկորներ դարձած, իրարու կը քաշուին ձգողա-  
կան ուժէ մը որ «ապրելու պէտքը» կը կոչուի: Ռուս լե-  
զուն, բնութեան իբր խորհրդաւոր գորութիւն մը, միմե-  
անց կը կ'պցնէ այդ բեկորները՝ Հայ, Վրացի, Լէզիկի,  
Թիւրք, Պարսիկ, եւ նոր մարմին մը բաղադրելու վրայ է:  
Ու այդ մարմինն ալ պիտի յարի, պէտի կ'պչի այն միա-  
ձոյլ մեծ գանգուածին որ ուսական հայրենիք կը  
կոչուի:

Յորմէ հետէ ոուր Կովկասի եւ Արարատեան նա-  
հանգին տիրած է, հայ լեզուն ընթացիկ կեանքի պա-  
հանջներէն բոնապատեալ, ամէն օր բան մը կը կորսնցնէ  
իր կարևորութիւնէն, և հետզհետէ կը գառնայ բթացած  
գործիք մը որ գուցէ թանգարանի մը զարդը պի-  
տի ըլլայ, հնախուզական ուսումնասիրութեանց օգտա-  
կար միայն: Ռուս բարբառին Արարատ-Կովկասեան Հա-  
յոց մէջ տարածման եւ հզօրացման հետևանքը եղած է  
հայերէն պարբերական հրատարակութեանց ուժասպա-  
ռումը, հիւժուժը. տոհմային մեծ մատենագրութիւն մը  
պիտի կրնայ աւելի բաղադրութիւն ակնկալել, պիտի  
կրնայ ապրիլ, եւ հայ կրօնքին դաշնաւորուելով հայ ու-  
զին գոնէ երկարակեաց պահել: Ռուսահպատակ Հայոց  
մեծ գրականութեան արդի երեկոյթը կրնայ զգացնել տալ  
անոր վերապահուած ժողովուրդի ապագան:



Ուշադիր գննելով այդ գրականութեան գանտզան  
բուլբուլը կ'անդրադառնանք թէ Հայոց արդի կեանքին հետ  
իր կ'ապրէր կամաց կամաց կը խզուին: Կարծիքը գուցէ  
արտաոտց թուի, բայց ճշմարտութիւնը վկայող նշաննե-  
րը չեն պակսիր: Մեծ անունները որոնք մեր ակնհերե-  
րը կը զոնչեցնեն, խոշոր հատորները որոնք մեր աչքերը  
կը շլացնեն, հատագնել կուտան թէ ուսահայոց մէջ  
բազմահարուստ գրականութիւն մը կը բարգաւաճի, մե-  
ծածոխ ապագայի մը խոստումներովը առ լի: Լուսադաւ  
երեկոյթ որ կը պատրէ մեզի ալ, Կովկասեան հա-  
յերն ալ:

Կովկասեան Հայոց գրականութիւնը կեանք ունենա-  
լու սահմանուած չէ, եթէ արդի հայ կեանքը օրէ օր  
իրեն օտարոտի դառնայ: Ռուսահայ մատենագրութեան  
վերջին քսան տարիներու պատմութիւնը ցոյց կուտայ  
թէ զուտ գործոց համարուած երկերը անշուքութիւն չու-  
նին Արարատ-Կովկասի օրուան կեանքին հետ: Բաժ-

Ֆիի էն համբաւաւոր վեպերը կամ թրքահայատակ Հայոց կեանքէն են՝ ինչէս Ճեղաշտտոտիւնը, Խեկերը, Կայծերը, կամ հին պատմական կեանքէն, ինչպէս՝ Սաւոռը, Դաշիր-Բեգը: Լէօ Մելիքիւն Աղջիկը գրեց իբր իր մեծ գործը. ուրիշներ ալ նմանապէս փարած են աւելի կամ նուազ հեռաւոր անցեալի մը: Կովկասի Հայոց գրականութեան նշանաբանը եղած էր՝ ժամանակակից կեանքը. մեր աշխարհիկ մատենագրութիւնը որ Պոլիս կը ծնէր, նախապատուութիւնը անցեալին կուտար. և ոակայն անդին պատմական կեանքը աւելի կարեւորութիւն կը սպանայ. ասդին՝ մեր աչքերը օրուան կեանքին կը յառին: Այս փոփոխութիւնը խորհրդածութեաց, վտրդապետութեանց հետեանքը չէ, այլ պարզապէս քաղաքական հանգամանքներուն ստեղծած կացութեան մը ծնունդն է: Թիւրքիոյ Հայերը ազգային վերակենդանութիւն հաւատքը ունին, անդրդուելի հաւատքը. օսմանեան կայսրութեան վիճակը կ'արդարացնէ մեր լաւատեսութիւնը. գրականութիւննիս բնագոյով կը մղուի այդ հաւատքին տարածմանը, հզօրացմանը, իրականացմանը ծառայելու: Մեր մէջ զրտկանութիւնը քսան տարի է օրէ օր աւելի կը ձգտի այդ նպատակին, որուն հասնելու էն ապահով ճամբաներէն մէկն ալ ժամանակակից կեանքին ուսումնասիրութիւնը և նոր տրուած ուղղութիւնը պիտի ըլլայ: Իրաւ է որ գրական մեծ գործեր չ'արտադրեցինք. սակայն նոյն իոկ այս ամլութիւնը ապացոյցն է մեր մտաւորական ձգտումին. բիրտ ուժը կ'արգիլէ մեզի մեր ուզածին պէս գրել. մենք ալ լաւագոյն կը համարինք զօպել ինքզինքնիս քան թէ արտադրել այնպիսի գործեր որոնք մեր մտածութեանց և զգացումներուն չեն համապատասխաներ: Սակայն օրագիրներու և հանդէսներու մէջ եղած հրատարակութիւնները ամէնքն ալ իրենց կարծածոտութեանը մէջ բարձրաձայն կը հռչակեն Թիւրքիոյ Հայոց գրողներուն գաղափարները և զգացումները: Ու հիմակ արտասահման ապաստանողներս մեր ամբողջ հոգը կեղրուանցուցած ենք ժամանակակից կեանքին բազմազան երեւոյթներուն վրայ, որոնք մեզի ապագային կ'առաջնորդեն:

Ռուսիոյ հայերը չեն հաւտար ազգային ինքնուրոյն անկախութեան ապագայի մը, հետեւաբար իրենց մատենագրութիւնն ալ չի կրնար ձգտում ունենալ այնպիսի նպատակի մը գոր ոչ ոք կը մտաբերէ օր մը իրականացած տեսնել: Ինչպէս որ կովկասեան հայ երիտասարդ մը մտքէն չ'անցնէր Ռուսաստանի Հայոց ազգային անկախութեանը համար իր անձը զոհել, այլ իր արիւնքը կուգայ նուիրել Թիւրքիոյ հայերուն, նմանապէս կովկասեան հայ մատենագիրն ալ իր տաղանդը Թիւրքիոյ Հայոց կեանքին նուիրելով է որ կրնայ զեղեցիկ գրական մեծ գործ մը ստեղծել. այդ գործը սակայն լեզուով ուստահայ է, և ոչ թէ կեանքով:

Տոհմային յատուկ կենցաղավարութեան հետզհետեւ տկարացումը երբ կովկասեան գրագէտները մէկ կողմէն

կը մղէ թրքահայոց կեանքի ուսումնասիրութեան, միւս կողմէն՝ անոնց մտաւոր գործունէութեան կը գծէ նաեւ վաճառական շրջանակ մըն ալ: Կը տեսնենք թէ կովկաս շատ ինամբողջ և մեծ կարողութեամբ կը մշակուին այն նիւթերը որոնց բարդաւաճմանը կը ծառայեն վաճառականները: Մեր կրօնաւորները, ինչպէս Մխիթարեանները, իրենց մտքին բոլոր ուժը նուիրած են հնախօսութեանց, լեզուաբանութեան, գիտութեան. ահա կովկասի Հայերն ալ կը զարգացնեն հնախօսական ուսումնասիրութիւնները, կը թարգմանեն նշանաւոր հեղինակներ, կը հրատարակեն ուսումնական գրուածներ. բայց այդ բոլոր աշխատութիւնները ոչ տոհմային սեփական տաղանդը կը զարգացնեն, ո՛չ ալ զուտ ազգային հոգով մատենագրութիւն մը կը ստեղծեն: Առանց վարանելու կ'ընդունինք թէ ժողովրդի մը յառաջդիմութեանը կը ծառայեն այն հրատարակութիւնները որոնք մենաստաններու տպարաններէն երևան կուգան. ամենքս ալ անոնց պէտք ունեցած ենք, և միշտ ունինք, մեր մտքի արտադրութեանց նախնական նիւթերու համարմանը համար. բայց ինչու կովկասի հայ տաղանդներն ալ կը ձգտին վաճառականներու ուղիէն ընթանալ. վասն զի իրենք ալ այն վիճակին մէջ կը գտնուին ուր են կրօնաւորները: Ասոնք հայրենի երկրէն հեռու, իրական կեանքէ անջատուած ըլլալով չեն կրնար իրենց միտքն ու սիրտը նուիրել ապրուած կեանքի մը պէտքերուն, կովկասի մտաւորականներն ալ, թէև տարբեր միջավայրի մէջ, տարբեր պայմաններէ շրջապատուած, բայց միևնոյն կղզիացեալ վիճակին մէջ են: Իրաւ է որ հայրենի աշխարհին վրայ են, բայց «յաշխահի էր և աշխարհ զնա ոչ ծանեաւ»: Ու աշխարհը ինքն ալ յետագայ սերունդներուն անձանաչելի պիտի ըլլայ, հայ աչքերը հիմակուց կը պղտորին: Լեռներն ու ձորերը անոնք են որ կը պարարէին մեր հայրերուն աչքերը. բայց զուտ հայկական արձագանգները այլ ևս չեն հնչեր հոն. բազմազարեան թաճերաբեմին վրայ վարագոյր մը կ'իջնէ, տեսարանը փոխելու համար: Հայ կեանքը յարածուն մղումէ վարեալ ուստացման կը դիմէ: Ինչպէս նաև մը նաւահանգիստէն յուշիկ յուշիկ գործս կ'ելլէ, բայց անգամ մը որ ճամբան մտնէ ալ շոգեպինդ կը յառաջանայ, նոյն և ուստացումը յամբաբայ կ'ընթանայ հայ հողին վրայ. դպրոցներու խումբը, զինուորագրութիւնը, տընտեսական պայմաններու փոփոխութիւնը, ուսական լեզուին ընտելացումը և այլ ևս զանազակոտ գնացքի հարկը զգալի չեն ըններ: Հայ միտքը տկարացած արծիւի մը պէս զեռ կը թևաբախէ օդին մէջ, բայց չի կրնար ազատ սաւառնիլ. շնչասպառ ինչալու վտանգը առնութեւ է:

\* \* \*

Դարուս առաջին քառորդին երբ ողբական ափրակ պետութիւնը Արարատ-Կովկասի վրայ սկսաւ տարածուիլ, հայ ժողովուրդը զբեկուած կը մնար տոհմային գրականու-

Թեան մը ստեղծման էն կենսական պայմանէն՝ լեզուէ։  
 Հայը գրականութեան համար լեզու չունէր։ Գրաբարը  
 բարձր գրականութեան մը ամէն պահանջները սքանչելի  
 պահպանելու համար բոլոր յատկութիւնները ունէր, բայց  
 ժողովրդին անպէտ էր։ Հայոց մեծ մասը իր հին լեզուն  
 բոլորովին չէր յոռոցած, բայց իրեն բիշ շատ հասկնալի կը  
 մնային կրօնական բացատրութիւնները միայն, որոնց ա-  
 մէն օր կ'ընտելանալէ եկեղեցիին մէջ։ Մինչեւ աստիճան  
 մը ուսում ստացողներն ալ կրնային օգտակարապէս կար-  
 դալ կրօնական գիրքերը. այդ անձուկ շրջանակէն դուրս  
 գրաբարը հասկնալ կարենալու համար մասնաւոր կըր-  
 թութիւն պէտք էր ստանալ։ Իսկ գրաբար գրելու համար  
 անհրաժեշտ էր այդ հին լեզուն իբր խորին գիտութիւն  
 մը սորվիլ, ամբողջ կեանք մը նպաստելով անոր։ Անդին  
 կը մնար ձգողը բարբառը, որուն յատակը թէ եւ  
 հայկական, բայց մեր երկիրը արշաւող օտար հոսանք-  
 ները անոր վրայ խաւ ի խաւ բարդեր էին իրենց մրուրը։  
 Դարերու ընթացքին մէջ հայ լեզուն շաղախուելով պար-  
 սիկ, թիւրք, տաճիկ բարբառներուն հետ կը ներկայա-  
 ցնէր անանուն, անկերպարան զանգուած մը որ կրնար  
 սահմանափակ կեանքի մը պէտքերուն համար բաւա-  
 կան համարուիլ, մինչեւ իսկ ծառայել կարգ մը հրատա-  
 րակութեանց որոնք սրտի ու մտքի նախնական պէտքե-  
 րուն անմիջական գոհացում պիտի տային. բայց անհնա-  
 րին էր այդ սիկախան, տղուտ հողին վրայ գեղեցիկ,  
 ամրակառոյց գրականութիւն բարձրացնել։ Պէտք էր հո-  
 ղը կամաց կամաց մաքրել, ձեռնարկ մը որ ծանր աշխա-  
 տութեան ու ժամանակին օգնութեանը կը կարօտէր. մինչ  
 ասդին մտասով ժողովրդին սնունդ հայթաթելու պար-  
 տականութիւնը կը ծանրանար մասնաւոր կարողութիւն-  
 ներով օժտուած մտքերու վրայ։ Ինչպէս որ սովատանջ  
 ժողովուրդ մը կերակրելու համար ցորեններու որակին  
 ո՛չ ոք ուշադրութիւն կ'ընծայէ, ձեռք կուտայ որ հաց մը  
 շինուի անոնցմէ, նոյնպէս եւ լեզուական ալիւրին շատ  
 բարակը չփնտեղին անոնք որ հայ ժողովրդին միտքը  
 սնուցանելու գործը ձեռք կ'առնէին։ Եւ Արարատեան  
 նահանգը ունեցաւ իր «Վէրք Հայաստանի»ն որուն ան-  
 ընդհատ շարունակութիւնը եղան հեղձեմէ բազմա-  
 թիւ վէպեր, թատերգութիւններ, բանաստեղծութիւններ։

Այդ բոլոր հրատարակութիւնները, շատ քիչ բացա-  
 ռիկ էջերով, ժողովրդին խօսած ու հասկցած լեզուին մա-  
 կարթակէն վեր չէին բարձրանար. եւ անհնարին ալ էր  
 տարբեր սճով գրականութիւն մը։ Հեղինակները իրա-  
 կան կեանքի նկարագրութիւնը ծրագրած էին, հարկ էր  
 հետեւեալ գործածել ճիշդ ու ճիշդ այն բառերն ու բա-  
 ցատրութիւնները որոնց սովորած են իրենց ներկայացու-  
 ցած տիպարները։ Ժողովրդական վիպասանութիւնները  
 մեծ մասամբ խօսակցութեան վրայ հիմնուած են, ունը-  
 կարագրութիւնները շատ անգամ երևան կուզան այն օ-  
 տար եւ աղաւազեալ բառերով որոնք ամենուն բերնին  
 մէջ ընթացիկ են և ու թէև ֆիզիկ ու ճիշդ համարժեքը հա-

յերէն կայ բայց գործածութիւնը անբնական պիտի ե-  
 ռուէր։

Հայ ազգը կըր ուսական տիրապետութեան ներքե  
 ա՛լ հանգստութիւն կը վայելէր եւ իր տնտեսական վի-  
 ճակը կը բարուցէր, միևնոյն ատեն իր մտաւորական  
 զարգացմանն ալ կը հետամտէր։ Հայոց յառաջդիմու-  
 թեանը համար գրական միօրինակ լեզուի մը պէտքը  
 անհրաժեշտ էր. նոր սերունդ մը ուզեց այդ լեզուն դարբ-  
 նել, առաջնորդելով ժողովրդական բարձրաններէն. ու  
 յաջողեցաւ։ Այդ լեզուն կը բարգաւաճէր հեղձեմէ, եւ  
 պարբերական հրատարակութեանց, գրքերու, ուսումը ս-  
 տացող դասին լեզուն դանաւով, բոլոր ուսուցչատակ  
 Հայոց միութեան հզօր կապը եղաւ Հայ Եկեղեցիին  
 հետ ընկերակցութեամբ։ Իր ազդեցութիւնը տարածուե-  
 ցաւ Պարսկաստան, ուր գրեթէ հայկական բարբառը ե-  
 ղաւ. թափանցեց թիւրքիս, եւ մեղի այնքան ընտանի  
 դարձաւ որքան մեր պոլոական աշխարհաբարը, եթէ  
 ո՛չ գրելու բայց գէթ հասկնալու պարագային համար։

Ռուսահայ գրական բարբառը օրէ օր ճոխանալով սահ-  
 մանուած էր տոհմային հզօր մատենագրութեան մը  
 ստեղծմանն ու բարգաւաճմանը սքանչելիապէս ծառայե-  
 լու, բայց մինչ ան կը յառաջդիմէր, միևնոյն ատեն ու-  
 սերէնն ալ իրեն մրցակից կը հանդիսանար։ Առաջին  
 յօգուածով մը պարզուեցան ուսերէնին յառաջդիմութեան  
 պատճառները, որոնք նախ տնտեսական ու վարչական  
 եղան, եւ յետոյ գրական ալ։ Իսկ հայ զպրոցներու ու-  
 սացմամբը շատ ծանր հարուած մը զարնուեցաւ հայ  
 լեզուին, հայ մտքին, Հայութեան ապագային։ Աղէտին  
 անբաւութիւնը ժամանակը միայն ցոյց կուտայ։

Հայ մանուկը որ երբեմն իր ուսումը հայ վարժա-  
 րանին մէջ կը ստանար, պատիկուց կ'ընտելանար մայ-  
 րենի լեզուին ամէն բառերուն, գաղտնիքներուն, նրբու-  
 թեանցը, գործնք ի հարկին զիրութեամբ ալ կը գործա-  
 ծէր։ Տասնը հինգ տարի է հայ տղան ուսերէնով կը  
 սորվի պատմութիւնը, բնագիտութիւնը, տարրալուծութիւ-  
 նը, թուաբանութիւնը, աշխարհագրութիւնը, ուսանելիք  
 բոլոր առարկաները։ Ռուսական բառերն են, բացատրու-  
 թիւններն են, դարձուածներն են որ կը զետեղուին, կը  
 տպաւորուին իր մտքին մէջ։ Երբ ա՛լ զպրոցէն կ'ելլէ,  
 բերանը բացած պահուն տմէն զաղափար ուսեւլար կը  
 ներկայանայ մտքին առջևը, զրիչը ձեռք առած բոպէին  
 ուսերէնը ինքնիրենը կուգայ անոր ներքեւ։ Շրջանաւար-  
 տը եթէ համալսարան յաճախէ միշտ պետական լեզուով  
 է որ մասնագիտութիւն մը պիտի սորվի. եթէ գործի ձեռ-  
 նարկէ, վարչական ճիւղի մը մէջ մտնէ, ինչ որ ուզէ ընել՝  
 միշտ ուսերէնին պէտք է դիմէ։

Անհնարին է լրջօրէն գրագէտ ըլլալ առանց նախա-  
 պատրաստական ծանր աշխատութեանց։ Մատենագիր  
 մը համարած ունենալու է հայրենի լեզուին բոլոր բա-  
 ռերը, պէտք է թափանցած ըլլայ անոր բոլոր գաղտնիք-  
 ներուն, քաջ դիտնալու է ժողովրդին աւանդութիւնները,  
 իր ցեղին պատմութիւնը, կեանքը խորապէս ուսումնա-

սիրած պէտք է ըլլայ. օտար լեզուով ստացուած կրթութիւնը եւ դաստիարակութիւնը բողոքովին անյարմար կ'ընեն գրականութեան մարդ: Ռուսաստանցի զարգացեալ հայ մը երբ ուզէ հայերէն գրել հարկ է որ ծանր աշխատութիւններ կատարել յանձն առնու: Այլ եւս ինքնիրենը գրագէտ չբղիւր ժողովրդէն, մանաւանդ որ հայերէն ընթերցողներու թիւն ալ հետզհետէ պիտի նուազի:

Պիտի նուազի, վասն զի զիրք մը կարգալու, անկէ համ առնելու եւ օգտուելու համար անհրաժեշտ է լեզուական խնամեալ կրթութիւն մը ստացած ըլլալ: Երգ հայ բարբառը կը զարգանար Արարատ-Կովկասի մէջ-միկնոյն ատեն կ'աճէր մշակեալ լեզուով հրատարակութիւն կարգացողներու թիւը: Թրքահայաստակ Հայոց զբրականութիւնն ալ, թէև օրագրական սահմաններու մէջ սեղմուած, զուգընթաց է լեզուական յառաջդիմութեան: Ժողովուրդին մէջ լեզուի տկարացման հակահարուածը անմիջապէս գրականութեան գլխուն կ'իջնէ: Ընթերցումը ո՛չ ազգասիրական պարտականութիւն է, ո՛չ ալ հոգեւորական. ամէն մարդ կամ հաճոյքի մը համար կը կարգայ, կամ օգուտ մը քաղելու համար: Ռուսերը սոհ-մային մեծածոխ մատենագրութիւն մը ունին, որուն վերայ կ'սքանչանան Եւրոպայի էն մեծ ազգերն իսկ. ուս-սերէնի թարգմանուած են աշխարհիս բոլոր ազգերուն զբրական եւ զիտական գրքերու ամենաստուար մասը. ընթերցասէր ուսահայը իր բոլոր վայելքը, իր բոլոր բարիքը անոնց մէջ կրնայ գտնել, մանաւանդ երբ ալ կը վարժուի իր մայրենի լեզուէն աւելի զիւրութեամբ զայն հասկնալու: Եւ ինչպէս որ ուս պարբերական մամուլը կը տկարացնէ հայկականը մինչեւ որ զայն մահացնէ, նոյնպէս եւ ուս մատենագրութիւնն ալ հայկականին բնածին թշնամին է, թէ եւ առանց մտքէն իսկ անցընելու:

Կովկաս հաւաքական ջանքեր ի գործ կը դրուին հայ լեզուին Հայոց մէջ տարածմանը եւ հզօրացմանը համար. այդ ջանքերը կը հաստատեն թէ հայ լեզուն և հայ գրականութիւնը չեն կրնար իրենք իրենց սեփական ուժերովը կանգուն մնալ: Եթէ մենք թիւրքիոյ մէջ վայելէինք Ռուսիոյ հայոց նիւթական հանգստութեան, տնտեսական բարեկալութեան գոնէ մէկ մասը, ապահովաբար հայ լեզուն, հայ մամուլը, հայ մատենագրութիւնը հրաւր շալի յառաջդիմութիւն պիտի ընէին առանց ո՛ր և է հաւաքական մարմնի նպաստին եւ օժանդակութեանը. գրող ժողովուրդ պիտի բաւէին իրարու:

Այն ուսահայերը որ գրականութեան, հրապարակագրութեան համար բնածին յատկութիւններով օժտուած են հետզհետէ պիտի նետուին ուսական մամուլին մէջ ուր ընդարձակ ասպարէզ կը բացուի առջևին: Չանշեան մը, ջերմ ազգասէր հայ, իր տաղանդը ուս մատենագրութեան կը նուիրէ, վասն զի իր ստացած կրթութիւնը ուսական է: Կովկաս ուսական օրագրութիւնը բազմաթիւ Հայեր կը պահէ:

Արարատ-Կովկասի հայ գրականութիւնը կրնայ բար-աւաճիլ ու երկարակեաց ապրիլ եթէ ուսական մատե-

նագրութեան հետ մրցելու յատկութիւններով հզօրանայ: Հայ գրագէտները երբ Գեղեցկին հմայքով զգլխեն հայ ցեղը, իր լեզուին խանդավառ սիրահարը պիտի պահեն զայն: Ու ճշմարտութիւն է թէ՛ Սէրը կեանք է: Աղամեան Կովկասի մէջ հայ լեզուին բարերարը եղաւ պարզապէս թատերարեմիս վրայ եզական հանճար մը ներկայանալով ու իր ետեւը թողլով օտարազգի տաղանդները: Աղամեանի հանճարին առջեւ Ռուսերը իսկ խոնարհեցան. Շէքսպիրը հայերէն բարբառով մտիկ ըրին, հայ հանճարը զիրենք խանդավարեց: Գեղեցկութիւնը եթէ ազգութիւն եւ հայրենիք չունի, բայց նաև կը խորտակ տիրապետող ցեղի մը ամբարտաւանութիւնն ալ:

Գրականութեան համար մեծ կարողութիւններով օժտուած ուսահայ երիտասարդները հայ մատենագրութեան ասպարէզն օրէ օր աւելի հեսանալու փորձութեան մէջ են: Հայ տաղանդի մը համար հայ գրականութիւնը հայրենասիրական նահատակութիւն է: Եթէ Կովկաս ունենայ երիտասարդ գրողներ որոնք իրենց գերագոյն հրճուանքը փնտոնն այդ նահատակութեան մէջ, կրնանք յուսալ թէ հայ լեզուն երկարատեւ կեանքի մը առհաստաչեան կունենայ, սպասելով ապագայի Անձանօթին:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՈՌԻՍԻԱ, ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԹԻՒՐԵԻԱ

(Սրբաբար շարաթարթերէն)

Չարմանալի է, ինչպէս Գարլալ կ'ըսէ, թէ փտած յօրինուածութիւն մը ո՛րչափ երկար կը տեւէ: Կ'ենթադրենք թէ նախախնամութեան թոյլատրած մէկ գաղտնիքն է ասիկա՝ անհուն նպատակներու համար զորոնք մեր սահմանաւոր միտքը չի կրնար նշմարել, եւ կ'ընդունինք իրողութիւնը: Բայց, աներկբայ, տարօրինակ բան մըն է որ թիւրքիա, որուն ամէն կողմէ վտանգը կը ըսպանայ, որ ներքին փտութեամբ և տեղահանութեամբ ծակ ծակ եղած է, որ գող վարիչներու խմբակէ մը ամէն օր թալանի կը տրուի, և որուն հետ ա՛լ ոչ ոք կը վարուի անձնիշխան պետութեան մը պէս, թիւրքիա տակաւին կը տեւէ, — խոշոր բարբարոսութիւն մը՝ ճի՛շդ քաղաքակրթութեան մէջտեղ, եւ բնակելի երկրագունտին կեդրոնական մասին տէր: Լէբանդայի ճակատամարտէն ի վեր թիւրքիա երթալով կ'իյնայ, իր հողը պատառ պատառ կ'անցնի իր հիւսիսի մեծ թշնամիին ձեռքը, կէս դարու մէջ՝ իր բնակչութեան կէսը եւ իր եւրոպական ստացուածքներուն մեծագոյն մասը կորսնցուց, եւ այսօր՝ իր ամէնէն կենսական նիւթական շահերուն վտանգը կը սպանան եւրոպական երկու մեծ պետութիւն: Արաճուարտի մէկ թղթակիցը կը նկարագրէր թիւրքիոյ սնանկ գանձա-

րանը, և անվճար զինուորներուն ու պաշտօնեաներուն շքաւոր ընտանիքները: Եւ սակայն թիւրքիս կը տեւէ, և կրնայ ըլլալ որ, ի նկատ առնելով եւրոպական պետութեանց փոխադարձ նախանձութիւնները, տակաւին տարիներ ալ տեւէ իր թոյլատրուած պետութիւն մը, մասնաւորապէս երբոր յիշենք իր աստուածպետական հանգամանքը, որ պարզ քաղաքականէն շատ աւելի զօրաւոր կապով մը իրար կը միացնէ իր ժողովուրդը, և երբոր յիշենք իր արի և զօրեղ բանակը: Սա կրնանք ըսել սակայն թէ թիւրք պետութիւնը պիտի վերջանայ այնպէս ինչպէս սկսած էր—արիւնի հեղեղի մը և աւերակներու կուտակումներու տակ: Օսմանցի հրոսը իր ամբողջ պատմութեան մէջ նոյնը մնացած պիտի ըլլայ:

Բայց, միև կողմէ, իր իշխանութիւնը այսօր ահեղ վտանգի մի ներքէ է Գերմանիոյ և Ռուսիոյ կողմէն, որոնք շրջահայեաց և կերպով մը վտանգաւոր խաղ մը կը խաղան սուլթանին ասիական ստացուածքներուն մէջ, — վտանգաւոր՝ թիւրքիոյ համար, և թերևս իրարու համար ալ: Հիլլենական պատերազմէն ի վեր Կ. Պոլսը այցելողները քաղաքը զրծեթէ ամբողջ Գերմաններուն ձեռքը կը գտնեն: Կը տեսնեն զօրքերը՝ գերման սպաններու հրամանատարութեան տակ, օթէշները՝ գերման վաճառականներով և արտօնութիւններ խնդրողներով լեցուն, և կ'իմանան Սնզլիացիներուն և Ֆրանսացիներուն տըրտընջալը թէ ձեռներէց Տեստըր ամէն բան ձեռքը անցընելու վրայ է: Աւելորդ է ըսել թէ այս գերմանական համայնադրու ազդեցութիւնը արդիւնքը կը նկատուի այն անաքօղ աշակցութեանը զոր Գերմանիոյ կայսրը, գերման ժողովրդին զանգուա՛նին հաւանութեամբը, սուլթանին նուիրեց ո՛չ միայն Յունաստանի դէմ պատերազմին, այլ և Հայերուն դէմ դործուած ոճրին ատեն: Երկու իրողութիւններն ալ կը վերագրուին Փոքր-Ասիոյ մէջ գաղթալին ծաւալման քաղաքականութեանը, որ Վիլհելմ կայսր բազմաթիւ մայր-գաղափարներէն մին, թերևս ալ իր ամենէն կարևոր և ամէնէն յաճախ գաղափարը: Այս ծրարողին պատճառաւորութիւնը անշուշտ ակնբեր է: Գերմանիոյ համար հարկ մըն է հողային ծաւալում ունենալ՝ գերման ժողովրդին ահագին աճումին պատճառաւ: Ժողովրդին աւելցած մասը լեզուով, զգացումով և ընկերական կազմաւորութեամբ Գերման մնալու է, թէ չէ երթալու կորսուելու է Միացեալ Նահանգներու խոշոր կազմակերպութեան մէջ: Պիզմարը կրցածին չափ աշխատեցաւ գաղթականութեան հոսանքը կեցնել, մինչ միև կողմէ հակառակ էր գաղթային ո՛ր և է աշխարհավարութեան: Բայց իրողութիւնները իրմէ աւելի ուժով էին, և ժողովրդին աճման ձգտումը իրմէ ի վեր ալ աւելի ակնբեր կարձաւ: Հետևաբար, Վիլհելմ կայսրը, տեսնելով որ այս բնակչութեան խնդիրը շատ ծանր հարց մը գտնալու վրայ է, չորսդին նայեցաւ, և սա եզրակացութեանը եկաւ թէ Ասիական թիւրքիոյ լքեալ բայց արդաւանդ ու կարևոր երկիրները գերազանցապէս յարմար էին գերման գաղթաւորման: Ատենօք այդ երկիր-

ները քաղաքակրթութեան բո՛ւն կեդրոնն էին. չէ՛ն կրնար նորէն նոյնը ըլլալ: Շատ գերման գաղթականներ արդէն ճշմարիտ օլտախներ ստեղծած են Սուրիոյ անապատներուն մէջ, գերմանական սիրուն գիւղերով՝ որոնք ամէն ճամբորդի գովասանքին կ'արժանանան: Այդ գաղութներուն անհուն ծաւալումը, կազմակերպեալ գրութեան մը ներքէ որ ապագային կարենայ գերմանական Սե ծալու և Միջերկրականի վրայ բացուող և Եւրոպայի ու Ասիոյ մէջտեղ գերմանական Գաղթային կայսրութիւն մը դառնալ, բնականաբար Վիլհելմ կայսր արթուն մըտքին ուշադրութիւնը գրաւեց: Երկու բան պէտք էին այս քաղաքականութեան յաջողութեանը համար, — լաւ համաձայնութիւն մը թիւրքիոյ հետ, և երկաթուղիներու արտօնութեան շարք մը որոնք իրար կապէին գերման գաղութները՝ գերման կառավարութեան հովանաւորութեան տակ և գերման դրամազլխին աշակցութեամբ: Այդ քաղքականութիւնը զերծ չմնաց անորոշ հանգամանքներէ. բայց աղէկ յլացուած էր, և մեծ յաջողութեամբ առաջ տարուեցաւ:

Բայց Ռուսիա սկիզբէն ի վեր իրենը կը նկատէ քայքայուող թիւրք կայսրութիւնը, և տրամադիր չէր տեսնելու որ իր հակառակորդ գերման դրացիները մէկի գնել տային իր պահանջումները: Հայկական և Հիլլենական տաքնապններուն ատեն անորոշ քաղաքականութիւն մը պահեսցուցած էր ռուսական քաղաքականութիւնը, որ հինգ-վեց տարի առաջ ամենազօր էր Իրան վրայ. ուստի, երբոր Գերմանիա մէջտեղ ելաւ իբր ընկալեալ բարեկամ մը, Ռուսիա վերստին ձեռք առաւ իր թիւրքիոյ թշնամի հին կերպարանքը: Բայց Ռուսիա, իբր թիւրքիոյ պատմական ենթադրեալ ժառանգորդը, չէր կրնար ընդունիլ որ ո և է կերպով ստորին դիրք մը սնննայ Կ. Պոլսոյ դիւանագիտութեան մէջ, ուստի իր պահանջումները մէջտեղ դրաւ, ո՛չ ծայրահեղ ձեւով մը, այլ Գերմանիոյ ձեռք բերածին հաւասարող խնդրանքներու շարքով մը: Բայց մինչդեռ Գերմանիոյ ձեռք բերած երկաթուղիի արտօնութիւնները իրաւցնէ առևտրական ձեռնարկութիւններ են, Ռուսիոյ համար՝ իրենները աւելի՛ քաղաքական են: Ռուսական դիժերը հաւանօրէն արժեքաւոր պիտի ըլլան ռուս կայսրութեան համար՝ իբր քաղաքական մեծ կազմակերպութիւն մը. — թէ՛ Եւրոպայի և թէ՛ Ասիոյ մէջ ռուսական երկաթուղիներու հարցը արդէն այդ քաղաքական նպատակներուն համար ստեղծուած է: Գերմանական դիժերը, ընդհակառակը, առևտրական որոշ արժեք մը պիտի ունենան, բաց ի այն խորհրդանշանէն զոր պիտի ներկայացնէին գերմանական տիրապետութեան առաջադրեալ ծաւալմանը համար: Այդ գերման երկաթուղիներուն նպատակ որոշուած է խաղաղօրէն և աստիճանաբար Փոքր-Ասիոյ ռեփականատիրութիւնը թիւրքիոյ ձեռքէն Գերմանիոյ և Ռուսիոյ ձեռքը անցընել: Հիւանդ Մարդը իր ստացուածքէն պիտի զրկուի կտոր կտոր, և անուղղակի բան սղղակի միջոցներով:

Թիւրքերն մերկացնելու կողպտելու այս աստիճանական ու մեքենական ընթացքը յաջողի՞ պիտի: Ուրիշ խօսքով, կարելի ըլլա՞յ պիտի վերջ տալ թիւրք իշխանութեան՝ վաճառականութեան և փոխադրութեան միջոցներու յեղաշրջման խաղաղ միթոտներով: Մենք կը տարակուսինք այդ մասին: Օսմանեան իշխանութիւնը աշխարհք եկաւ իբր աշխարհակալ և արինոուշտ հրոս մը, և իր նկարագիրը բնաւ փոխուած չէ եւ փոխուելիք ալ չունի: Այսօրուան փաշաներուն եւրոպական տարագին տակ՝ ցեղին յատուկ վայրագ ցանկութիւնները եւ կրքերը կը արօփեն. սուլթանը. ի բնէ խորամանկ բարբարոս մըն է, զոր անշուշտ խստիւ կը քննադատեն ուժգին եւ «բարենորոգեալ» թիւրքերը, բայց որ, վերջապէս, իր հպատակներուն հիմնական գաղափարները կ'անձնաւորէ իր մէջ. և, ամէն բանէ աւելի, թիւրք դուռները, որ աստուածպետութեան վրայ հիմնուած է, չի կրնար բարեկարգուիլ: Տաշեցէք զինքը որչափ որ կրնաք, արևմտեան քաղաքակրթութեան մակերեսային բոլոր տարրերը մտցուցէք իր մէջ կրցածնուդ չափ, չէք կրնար վերջնապէս արգելել դէմադէմ ուժերու մեծ ընդհարում մը՝ երբոր կորովի ու անսկան Սլաւը իննոզ Օսմանցիին վրայ նեաուի: Դիւրին չէ ըսել թէ Գերմանիա ինչ զիրք պիտի բռնէ երբոր այդ անխուռաբելի օրը գայ: Իր բարբարոս պաշտպանեալին թե ու թիկոնք պիտի ըլլայ, ու այդպիսով եւրոպական պատերազմի վտանգ մը բռնալ պիտի բերէ, թէ չէ, իր փոքր-Ասիայ նոր շահերը պաշտպանելով հանդերձ, համաձայնութեան մը պիտի գայ Ռուսիոյ հետ: Այդ գործը Անգլիոյ հետ շատ անուղղակի յարաբերութիւն մը ունի, բայց յուսանք թէ Գերմանիա թիւրքիոյ մէջ չխաղայ այնպիսի զեր մը որ պատճառ ըլլայ թիւրքիոյ տեւելուն, այդ աշխարհի քաղաքական ամենամեծ գայթակղութեան շարունակուելուն: Գերմանիա, Աւստրիա և Ռուսիա անգամ մը «սակարկութիւն» մը ըրին Բոլոնիոյ շուրջը: Պատմութիւնը ինչ ալ ըսէ այդ մասին, զըժուար թէ գատապարտէ սակայն թիւրքիոյ մասին «սակարկութիւն» մը նոյն այդ երեք Պետութեանց կողմէն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ**

Հայերը իսլամութեան մղելու քաղաքականութիւնը Հայաստանի մէջ երկաթէ ձեւքով կը գործադրուի: Եւրոպայի մամուլին հասած տեղեկութիւնները շատ ծանր են: Հեքեարիի նահանգին մէջ 430 հայ պարտաւորուեր են մահմետականութիւնը ընդունիլ, չկարենալով այլ եւս կառավարական հալածանքին տակալ: Կ. Պոլսէն կը հեռագրուի թէ Հայոց իսլամացման ծրագիրը մասնաւոր ջանքերով կը գործադրուի Տիարպէքիի եւ Խարբըղի

նահանգներուն մէջ:

Տիարպէքիի աշխարհազրական զիրքը Դրան ուշադրութիւնը գրաւած է: Թիւրք կառավարութիւնը կը զգայ թէ շնորհիւ այդ զիրքին Տիարպէքի մօտաւոր ապագայի մը մէջ քաղաքական առաջնակարգ կարեւորութիւն պիտի ստանայ, հետեւաբար կը ջանայ հոն քրիստոնեայ ցեղերը արագապէս տկարացնել: Էն վայրագ թիւրքերէն մէկուն, Խալըթ պէյի, պաշտօն յանձնուեցաւ ընդհանրապէս բոլոր քրիստոնեաները և մասնաւորապէս հայերը տանջել, չարչարել մինչեւ որ կ'ամ բնաջինջ ըլլան, կամ պարտաւորուին մահմետականութիւնը ընդունիլ:

Պոլիս ու Եւրոպա հասած տեղեկութիւնները կը հաւասան թէ Խալըթ պէյ իր վրայ դրուած վստահութիւնը կ'արդարացնէ: Տարիէ մը ի վեր է որ իր բոլոր ճիգը կը թափէ Տիարպէքիի եւ շրջականերու անտերունչ Հայոց վրայ, աշխարհաւեր պատահարէն մնացորդ արկածեալ, բազմակարօտ Հայոց վրայ: Տիարպէքիի համբաւաւոր զընտանին մէջ այսօր հարիւր հայ կը տառապին, կը տանջուին, իբր քաղաքական յանցաւորներ: Բանտարկուածները հետեւեալ վայրերէն են.

Չնքուչէն	53
Սեփրեկէն	11
Պշերիկէն	17
Տիարպէքիէն	15
Հայնիէն ու այլ և այլ տեղերէ	4
	100

Կուտակալը կ'աշխատի նրէ օր այս թիւը ստուարացնելու նորանոր հնարքներով: Մինչեւ վերջերս Խալըթի չարահնար վարպետութիւնն էր զլիւսաւորապէս հետեւեալը: Երգտեալ լրտեսները զիշերը փողոց անկիւնները կայնելով կը զիտէին անցնող հայերը, եւ անոնց վրայ յարձակելով ծոցերնին կը խոթէին յեղափոխական նամակներ, զոր իրենք դրած էին, եւ հայկական դրոշմեր. ու խեղճերը տեղն ի տեղը ձեռքակալել տալով բանտարկել կուտային: Չարագործները սկսան ճանչցուիլ եւ անցորդները արթնութեամբ կը հսկէին իրենց անձին: Այս զգուշաւորութիւնը կը խափանէր, զոնէ աստիճան մը, Խալըթի խորհուրդները, ուստի կը սկսի ուրիշ միջոցի դիմել: Իր պաշտօնատան մէջ նամակներ խմբագրել կուտայ, իբր թէ յեղափոխական կեդրոններէ գրուած են զանազան անձնաւորութեանց, եւ Տիարպէքիի զրկուած միջոցին քաղքին դուռ բռնուեր են: Կեղծ հասցէներուն տիրուածները կը կանչուին խոնախը, ու այդ նամակները կուտակալին ներկայութեանը թիւրքերէնի կը թարգմանէ Ուրացոյց հայը եւ այլ եւս զրպարտեալ հայը չի կրնար իր տունը վերադառնալ. շիտակ զընտան:

Այս զրպարտեալ բանտարկեալներուն հետ շարաշար խստութեամբ կը վարուի Խալըթ: Հետեւեալ դէպքը կրնայ գաղափար մը տալ այն տառապանքներուն որոնց կ'ենթարկուին հայերը:

Չընտանի Հայերը քանի մը ամիս առաջ կարող կ'ըլլան Պոլիս Պատրիարքարանին իմացնել թէ՛ իրենց եւ թէ՛ ընտանիքներնուն անօթի վիճակը. ու իբր պատասխան 50 օսկի կը զրկուի առաջնորդարան, բաշխելու համար կարօտներուն: Բայց պարտաւոր խնայիրը զրամին բաշխումն էր: Թաղական խորհուրդ, Քաղաքական ժողով, կարօտելոց խնամակալութիւն ամէնքն ալ բացէ ի բաց կը մերժեն նպաստի բաժանման յանձնառումը, վասն զի գիտեն թէ ինչ փորձանքի պիտի հանգիպին: Առաջնորդական տեղապահ Տ. Եղեկիէլ վարդապետի պարտականութիւնը կուզէ կատարել, եւ անուշով Պատրիարքարանի հրահանգներուն, քսան օսկին մէծիտիէի վերածել կուտայ, եւ անձի մը միջոցաւ շիտակ զընտան կը զրկէ եւ իւրաքանչիւր կարօտ բանտարկեալի երկուքական մէծիտ կը բաշխէ: Երբ խալըթ այս բաշխման գործը կ'իմանայ, սարսափելի կերպով բարկացած, իր ներկայութեանը կը կանչէ առաջնորդարանի յանձնակատարը եւ մեծամեծ սպանալիքներով կը հարցնէ թէ «Ի՞նչ համարձակութեամբ զրամ կը բաշխէք Տէրութեան վնասակար բանտարկեալներուն:» Յանձնակատարը տեսնելով կուսակալին զայրոյթը, կը յայտարարէ թէ այդ նպաստը Պատրիարքարանէն զրկուած է կարօտ բանտարկեալներու բաշխուելու համար: Այս պատասխանին վրայ կուտակալը հարցաքննիչ գատաւորին կը յանձնէ մարզը, և ան ալ ըստ օրինի պատասխանները կ'առնէ իբր ամբաստանեալէ մը: Կուտակալն ալ Եղեկիէլ վարդապետէն կը պահանջէ Պատրիարքարանէն պաշտօնապէս զրկուած նամակները, ինչ որ կը ներկայացուի հարկ եղած պատասխաններովը: Յանձնակատարը որ բանտարկուած էր կ'ազատի: Գործը վերջացած կը համարուէր, բայց ահա կը տեսնուի թէ խալըթ պէյ զաղանապէս կը գործէ եղբոր Ահա յանկարծ երկու երեք ամսուան լռութենէն յետոյ կ'ազգարարէ Առաջնորդարանին որ այդ երկու նամակներուն պատճենները հարցաքննիչ գատաւորին զրկուին: Կուտակալը այս լռութեան միջոցին Պոլիս զրամ եւ նոր հրահանգներ ուզած էր. Եղեկիէլ վարդապետ ալ գործը յետաձգեց, ինքն ալ Պատրիարքարանէն հրահանգի սպասելով:

Ուրիշ գաւ մըն ալ, Մօտ տարիուկէս առաջ Պշերիկ գաւառակին կառավարական սնտուկը բացուելով ստակ գողցուած էր. եւ այս պատճառաւ տեղին սանտոզ սարաֆի Պողոսն ու իր զոքանչը եւ 15-20 ուրիշ հայեր ալ, քահանան ալ մկիտեղ, Տիարպէքիր տարուելով բանտարկուեցան. հարցաքննութիւնները տարիէ մը վերջացան. Պողոսն ու զոքանչը իբր գող գատապարտուեցան, իսկ քահանան ու միւս ձերբակալեալ հայերը արձակուեցան: Արդ՝ Պողոս քանի մը ամիս առաջ բանտին մէջ մահմտականութիւն կ'ընդունի, եւ կուտակալին երթալով կը սկսի մատնութիւններ ընել: Խալըթ պէյ չափազանց կուտականայ. իր ուզածն ալ աս էր: Անմիջապէս կը հրամայէ որ թրքացեալ Պողոսը բանտէն հանեն եւ հեծեալ ստիկաններու ընկերակցութեամբ Պշերիկ զրկուի հարկ

եղած գործերը տեսնելու համար: Ուրացեալը Պշերիկ հասնելով կը յաջողի յարգանոցի մը մէջ պահել նամակ մը, եւ ապա խուզարկութիւններ ընել կուտայ տունները եւ այդ նամակն ալ կը գտնուի, հանդերձ ուրիշ թուղթերով զոր ուրացեալը յաջողած էր տունները ձգել: Թրքացած հայը աւարովը մկիտեղ Տիարպէքիր կը վերագոռնայ, եւ իր զրպարտանքները իբր ճշմարտութիւն կը տեղեկագրէ: Սակայն Պշերիկի կառավարիչը անցած զարձածը լսելով, և տեսնելով Պսղոսի անիրաւ արարքները, եւ միւս կողմէ իրեն անպատուութիւն համարելով այս նենգութիւնները, կը բողոքէ կուտակալ խալըթին թէ այդ ամէնը սուտ է, Պշերիկի մէջ «վնասակար հայ» չի կայ, ու Պողոս ստախոս զրպարտիչ մըն է: Այս բողոքին վրայ խալըթ պէյ աչքապուկ խաղալով Պողոսը բանտին մէջ լաւ մը ձեծել կուտայ ի պատիժ իր զրպարտութեանց: Բայց այս զաւեշար խաղալով հանդերձ ձեռքի տակէ նորէն կը մեքենայ: Ուրացեալին շինած նամակը թարգմանել կուտայ. կ'ըսէր գրուած է եղբոր Պշերիկի երեւելիներէն քսան Հ սոյոց, յականէ անուանէ. միւս կէտը՝ Եղեկիէլ վարդապետին եւ Տիարպէքիրի ականաւոր Հայոց: Պարունակութիւնն է իբր թէ Տալուրիկ լեռը ապաստանող յեղափոխական հայեր զրամ ըլլան: Խալըթ պէյ անմիջապէս Պշերիկէն բերել կուտայ այդ մատնուած: այսինքն՝ զրպարտեալ, հայերը որոնց թիւը 17ի կը հասնի, մինչեւ վերջի պահուն: Նորանոր ձերբակալութիւններ դեռ կը սպասուին: Հաւանորէն կարգը կուգայ առաջնորդական տեղապահ Եղեկիէլ վարդապետին և Տիարպէքիրի ծանօթ Հայոց:

ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՆՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Ապրիլի մէջ Կ. Պոլսէն մեր ընդունած նամակները ինչպէս եւ անդիտական թերթերու թղթակցութիւնները Օրմանեան պատրիարքին հրատարման վերաբերեալ հետեւեալ տեղեկութիւնները կը հազորդեն:

Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան ինդիքը առաջնակարգ կարեւորութիւն ունի այդ հրատարականը առթող պատճառներուն մէջ: Դուռը Հայոց Պատրիարքարանին իրւումները ոտնակոխ ընել տալով կուզէ Կիլիկիոյ Աթոռը բազմեցնել ուղղակի սուլթանին կամակատար եպիսկոպոս մը: Այդ կաթողիկոսին միջոցաւ Դուռը պիտի անջատէ Կիլիկիոյ Աթոռը Կ. Պոլսոյ Պատրիարքարանին քաղաքական իրաւասութենէն: Օսմանեան իշխանութիւնը չուզէր որ այլ ևս Թիւրքիոյ Հայերը իրենց զուլս լեննալով Կ. Պոլսոյ Պատրիարքարանը հօժ և ամփոփ քաղաքական մարմին մը կազմեն: Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը իր բոլոր թեմերովը երբ բաժնուի Պատրիարքարանէն տարակոյս չի կայ թէ մեր քաղաքական կացութիւնը ամենամանր հարուած կը կրէ:

Հրաժարականին միս երկու պատճառներն ալ հանրածանօթ են: Մէկն է զինուորական յետամնաց տուրքերու խնդիրը, միւսը ուղեւորութեանցը: Կոտորածներու եւ թալաններու միջոցին Հայոց կրած սոսկալի հարուածները զիրենք անկարող ըրած են զինուորական տուրքերը կանոնաւորապէս հատուցանելու. յետամնաց բաւական մեծակազ գումար մը կայ զոր տառապեալ ու խեղճ անօթի ժողովուրդ մը վճարելու բացարձակ անկարելութեան մէջ կը գտնուի: Պատրիարքը կը յայտարարէ թէ իր շորտարուան պաշտօնավարութեան մէջ օսմանեան կառավարութեան հանդէպ կատարելապէս ուղղամիտ (այսինքն՝ կուրօրէն թրքանուէր) ընթացքի մը հետեւած ըլլալով իրաւունք ունի պահանջելու որ իր յատուցած ծառայութեանց իբր փոխարինութիւն սուլթանն ալ այս յետամնաց գումարը ժողովրդին բաշխէ:

Քաշով վաճառականներու եւ ուրիշ դասի Հայոց ուղեւորութեան դէմ յարուցուած արգելքներուն, պատրիարքը կը յայտարարէ թէ երբ ամէն մէկ հայ անհաս պարզապէս իր հայութեանը պատճառաւ քաղաքականապէս կասկածելի է կառավարութեան աչքին, հետեւաբար հայ ազգը ամբողջապէս կասկածելի է, ինչպէս ուրեմն ինք կրնայ այդպիսի ժողովրդի մը զուտն ըլլալ եւ զոյն ներկայացնել սուլթանին առջեւ:

Պատրիարքին այս յայտարարութեանը վրայ Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութիւնը յետաձգուեցաւ, մանաւանդ որ ընտրողական մարմինն անդամներէն շատերը չփութացին որոշեալ օրը ժողովասրահը գտնուիլ:

Սուլթանը տեսնելով որ պատրիարքը այս անգամ իր որոշումներուն վրայ հաստատամիտ մնալու երեւոյթն ունի, ուզեց բռնութեամբ իր աթոռը վերադարձնել զանիկա: Դատական գործոց նախարարութիւնը սպառնազորով մը ազդարարեց պատրիարքին որ անմիջապէս Գուլ-Գարու վերադառնայ եւ իր պաշտօնը ստանձնէ: Թէզքերէն անարդական ոճով զրուած էր. Հայոց պատրիարքը կը նրկատուէր իբր պարզապէս Դրան երկրորդական պաշտօնեայ մը որ պարտաւոր հնազանդիլ իրեն տրուած հրամաններուն: Օրմանեան պատրիարքը այս թէզքերէին ալ չանսաց: Զատիկի տօնին առթիւ պալատէն հրաման եկաւ պատրիարքին որ Մայր-Եկեղեցի իջնէ եւ պատարագէ սակայն պատրիարքը իր տունը փակուած մնաց: Խնդիրը առ այժմ այս վիճակին մէջ է:

Պատճառներ ունինք հատալու որ Օրմանեան պատրիարքը իր հրաժարականին վրայ պիտի պնդէ, եւ Տատեան Արթին փաշա պիտի չհամարձակի ոչ պատրիարքը համոզել որ իր պաշտօնին վերադառնայ, եւ ոչ ալ ինք պիտի կարենայ իր վարչապետութիւնը շարունակել: Կ. Պոլսէն մեզի կը գրուի թէ Հնչակեան Մասնաճիւղին թէ առ Տատեան և թէ առ Օրմանեան պատրիարքը ուղղած ազդարարքերը բարեբար ազգեցութիւն մը ունեցած են:

ԹԻՒՐԲԻՈՅ ԶՈՐՍ ԿՈՂՍԸ

ՄԻԱՅԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ ՀԵՏԻ

Փոքր-Ասիոյ երկաթուղիներու խնդրին մէջ սուլթանը իր վեհապետական իրաւունքները Ռուսիոյ վաճառելով հազիւ թէ քիչ մը շունչ պիտի առնէր եւ ահա յանկարծ ծանր կացութեան մը մէջ կ'իյնայ: Ամերիկայի Միացեալ Նահանգներու կառավարութիւնը կը պահանջէ 100,000 տոլարի գումարը (20,000 անգլիական ոսկի) զոր օսմանեան իշխանութիւնը պարտական է թիւրքիաբնակ ամերիկեան հպատակներուն, իբր փոխարինութիւն այն վնասներուն զոր կրեցին 1895-96ի կոտորածներու եւ աւերումներու միջոցին:

Հանրապետութեան նախագահ Պ. Մաք-Բիլնի 1899 զեկտեմբեր 16ին Ամերիկեան Խորհրդարանին յղած պաազամագրին մէջ կը յայտարարէր հետեւեալը. «Միացեալ-Նահանգներու Կ. Պոլսոյ դեսպանը կը շարունակէ ճնշում բանեցնել եւ զրամական հատուցում պահանջել այն վնասներուն զոր ամերիկեան քաղաքացիներ կրեցին օսմանեան կառավարութեանէն, պատահած անկարգութեանց միջոցին: Այդ պահանջները մէկ քանի տարիէ ի վեր առկա կը մնան: Ամերիկեան կառավարութիւնը այս մասին ընդհանուր համաձայնութեան մը յանգելու յոյս ունի: Թիւրք պետութեան մէջ ամերիկեան քաղաքացիներու վիճակը գոհացուցիչ չէ: Քառսուն տարիէ ի վեր քաղաքացիութեան մասին զաշնադրութեան մը յանգելու մեր բոլոր ջանքերը կ'երկի թէ վերջնական անյաջողութեան պիտի մատնուին Բ. Դրան ընդգրկած քաղաքականութեան պատճառաւ, որով ան կը մերժէ 1867էն առդին թիւրք հպատակներու օտար երկրի քաղաքացի ըլլալու օրինականութիւնը:»

Ինչպէս այս յայտարարութեան կը տեսնուի, թիւրքիայէն Միացեալ-Նահանգներուն պահանջուած երկու մասի կը բաժնուի. մէկը՝ վնասներու հատուցում, միւսը՝ նախկին օսմանեան հպատակներուն ամերիկեան քաղաքացիութեան իրաւունքին ճանաչումը: Այս երկրորդ խնդիրը ոմանց համար թերեւս բացատրութեան կարօտի:

Յայտնի է թէ թիւրքիոյ մէջ օտարահպատակները առանձնաշնորհեալ իրաւունքներ կը վայելեն, և ուղղակի իրենց դեսպանատուններու իրաւասութեան ներքեւ կը գտնուին: Օսմանեան իշխանութիւնը այդ օտարահպատակներուն հետ կարող չէ վարուիլ այնպէս ինչպէս սուլթանին հպատակներուն հետ: Մինչեւ 1866 ամէն թրքեալ հպատակ երբ ուրիշ երկրի մը օրէնքներուն համաձայն անոր պետութեան հպատակութիւնը ընդունէր, ի դարձին թիւրքիոյ մէջ ալ առանց արգելքի կը մասնակցէր օտարներու վայելած բոլոր առանձնաշնորհմանց: Սակայն

իրենց հպատակութիւնը փոխելու զիրութիւն ունեցող թիւրքիացիներու թիւը շատ ցանցատ էր, որիթէ սչինչ։ Ամէն ոք չէր կրնար տարիներ Եւրոպա կամ Ամերիկա բնակիլ որպէս զի կարենար օտար քաղաքացիութեան իրաւունքը վայելիլ։ Հետեւաբար Դուռն ալ կարեւորութիւն չէր ընծայած հպատակութիւն փոխելու սակաւազէ պարզաներուն։ Բայց 1866ին Կրետէի ապստամբութեան առթիւ Յունաստանի կառավարութիւնը ամենայն դիւրութեամբ հելլենական անցազիր կը շոյալէր ոչ միայն կրետացիներու այլ եւ թիւրքիոյ զանազան նահանգները, ու մանաւանդ Կ. Պոլիս, բնակող թրքահպատակ յոյներու։ Այս առատաձեռնութեան անպատեհութիւնները աչքի զարկին. շատ չանցած Եորկիոս թագաւորն ալ Ապտիլ-Ազիզի չափ վեհապետական իշխանութիւն պիտի ունենար թիւրքիոյ մէջ, ուր հելլենահպատակ յոյները կարելի պիտի ըլլար բիրենբող հաշուել։ Դուռը Պետութեանց ու շարութեանը ներկայացնելով այս ծանր խնդիրը պահանջեց չափաւորել հպատակութեան փոփոխումին ընծայուած դիւրութիւնները։ Պետութիւնները ընդունեցին օսմանեան իշխանութեան առարկութիւններուն հիմնաւորութիւնը։ Համաձայնեցան որ ի բնէ օտարազգիները միայն իրաւունք ունենան առանց կաշկանդումի վայելիլ Քարիթիախախտներով ընդունուած առանձնաշնորհումները. իսկ ի բնէ թիւրքիացիներու հպատակութիւնը փոխուի սուլթանին հաւանութեամբ։ Այս կարգադրութեամբ այլ եւս գրեթէ անհնարին դարձած է թիւրքիացիի մը հպատակութիւնը փոխել։

Բայց Դուռը կարող չեղաւ այս պայմանադրութիւնը ընդունել տալ և Միացեալ-Նահանգներուն ալ, որոնց սահմանադրութիւնը անպայման կերպով քաղաքացիութեան իրաւունք կը շնորհէ ամէն անհատի որ հինգ տարի Միացեալ-Նահանգները բնակած է։ Եւրոպայի մէջ տարբեր դրութիւններ գոյութիւն ունին երկրի մը քաղաքացիութեան իրաւունքին շնորհմանը համար։ Այսպէս, Ֆրանսացի նկատուելու համար բաւական չէ որոշեալ ժամանակ մը Ֆրանսա բնակիլ, այլ նաև Հանրապետութեան նախագահին հաճութիւնն ալ ստանալու է։ Ֆրանսացիութեան իրաւունքը Ֆրանսական սահմանադրութեան նէն չըդիւր։ Ֆրանսայի իշխանութեան պետը ազատ է թրքահպատակի մը Ֆրանսացիութիւն շնորհել կամ ոչ. մինչ Միացեալ-Նահանգներու մէջ այդ սեղմումը զօրութիւն չունի։ Ուստի հայը որ հինգ տարի Ամերիկա բնակած է կարող է, եթէ ուզէ, ամերիկեան քաղաքացի, սիրզև, դառնալ, և անպայման կերպով վայելիլ ամէն սիրզևի իրաւունքները, ուր որ ալ գտնուի։ Ամերիկեան սահմանադրութիւնը եւ օրէնքները չէին կրնար մասնաւոր պարագայի մը համար փոփոխուիլ. և վաշինկթոնի կառավարութիւնը եւրոպական Պետութեանց օրինակին հետեւելու անկարող էր։

Թիւրքիա իր տեսակէտովը շատ իրաւունք ունի տալ նապի մատնուելու։ Թողլով ուրիշ ցեղերը, լսկ հայ ազ-

գէն Միացեալ-Նահանգները 15,000 դաղթական կը գտնուին. ասոնք ամէնքն ալ հայրենիք վերադառնալու յօժարակամ են երբ հպատակութիւն փոխելու խնդիրը վերջնապէս կարգադրուի։ Ու երկիր վերադարձողներուն պիտի յաջորդեն ուրիշ նորիկ գաղթականներ, ասոնք ալ իրենց կարգին. պիտի երթան հայրենիք, իրենց տեղը ուրիշներ ձգելով։ Եւ այս անընդհատ շարունակութեամբ քիչ ատենէն Հայաստանի մէջ մեծ թուով ամերիկահպատակ հայեր պիտի գտնուին. եւ բարեկարգութեանց խընդիրը ասոնց համար լուծուած պիտի ըլլայ գրեթէ, զի թիւրք իշխանութիւնը պիտի չհամարձակի այդ հայոց կեանքին, պատուին, ինչքին դպչիլ։

Առ այժմ սակայն Ամերիկայի եւ թիւրքիոյ միջեւ զբաղման հատուցումի խնդիրն է որ առաջնութիւն ունի։ Միացեալ-Նահանգներու կառավարութիւնը 100,000 տուարի անմիջական վճարումը կը պահանջէ։

Ամերիկայի Պոլսոյ դեսպան Պ. Սթրոս տեսնելով որ հակառակ իր կրկնակի խոստումներուն սուլթանը կը դանդաղի վճարումներն ընել, մեկնեցաւ Պոլսէն, ու Ամերիկա երթալով բացարձակապէս սուլթանը ստախօս հըռչակեց։ Ամերիկեան կառավարութիւնը այլ ևս Պոլիս լսկ գործակատար մը ունենալով բանակցութիւնները զլիսաւորապէս վաշինկթըն կը կատարուին։ Արտաքին գործերու պաշտօնատունը թիւրքիոյ դեսպան Ֆերուհ պէյի ղեկից թէ Կ. Պոլսոյ ամերիկեան դեսպանատունը պիտի փակուի, և իրեն ալ անցապիւրները ձեռքը տալով պիտի ճամբեն. ինչ որ պարզապէս պատերազմի յայտարարութիւն կը նշանակէ։ Եւ իրօք ալ ամերիկեան նաւատորմը կամ Իզմիրի առջեւ պիտի գայ կայնի ու մաքսատունը պիտի գրաւէ եւ կամ Տարտանիէն անցնելով ուղղակի Պոլիսը պիտի ողմբակոծէ։ Այս կտրուկ յայտարարութիւնները Երլազը տակնուվրայ ըրին։ Ամերիկեան շայրոյթը չափաւորելու համար սուլթանը փութաց հրամայել որ պէտք եղած օրինակեան ձեւակերպութիւնները գործադրուին որպէս զի միտինարները Խարբերդ իրենց հաստատութիւնը, որ այրած էր, վերստին կառուցանեն. ու Պոլիս ալ Րապէրթ գուէճին յարակից շէնք մը շինուի։ Ամերիկեան պահանջումներուն այս առաջին զոհացումը տալով, սուլթանը նաև մտաբերեց անուղղակի միջոցով կարգադրել վնասի փոխարէն հատուցումի խնդիրն ալ։ Ուզեց որ Միացեալ-Նահանգներէն զբահաւոր մը գնուի, եւ բուն արժէքին վրայ բարդուի 100,000 տուարի գումարը։ Այս նըպատակաւ ալ դեր-ժովպախտ Ահմէտ փաշա մը Պոլսէն ճամբայ ելաւ։ Այս օտարածուած լուրին վրայ ամերիկեան մամուլը յայտարարեց թէ՛ Ամերիկա ծախու պարսնք չունի. եւ թէ Միացեալ Նահանգներուն մէջ ամէն գործ հրապարակային ըլլալով հոն թրքակոն խարդախ վարպետութիւնները չէին կրնար յաջողութեամբ գործադրուիլ։ Հարկ է ուղղակի եւ կանոնաւոր կերպով ընել այդ վճարումը։

Սուլթանը սակայն երկու նկատումով կը դժկամակի

ուղղակի վճարման: Նախ եւ առաջ չուզէր որ ո՛ր է կերպով իր վրայ ծանրանայ կոտորածներու եւ թալաններու պատասխանատուութիւնը: Ժողովրդային «խառնաշփոթութիւն» մը տեղի ունեցած է կ'ըսէ, ուստի կառավարութիւնն ալ ո՛ր է պատասխանատուութեան ներքեւ չէ: Սակայն այս առարկութեան կը պատասխանուի թէ՛ հաստատուած ճշմարտութիւն է որ կոտորածներն ու թալանները ուղղակի կ'ըսեն: Պոլսէն զրկուած հրամաններուն վրայ գործադրուած են: Միսիոնարները կը վկայեն որ իրենց շէնքը աւարի տուող խուժանին մէջ կը գտնուէին թիրբ զինուորներ ալ: Ու սուլթանը ինքն անձամբ երկու անգամ խոստացած է ուղղակի վճարել պահանջուած հաստուցումը: Իսկ երկրորդ նկատումին գալով՝ Միացեալ-Նահանգներուն մտածելու խնդիրը չէ թէ երբ իրենց արդար պահանջումին գոհացում տրուի, միւս պետութիւններն ալ ձայն պիտի բարձրացնեն թէ ոչ: Սուլթանը միանգամայն փափաքող չէ որ մահմետականները անգամ մը եւս ապացոյց ունենան թէ իրենց Խալիֆը սպառնական ուժին առջև տեղի կուտայ միայն:

Կնճոտութիւնները այսքան չեն: Եթէ սուլթանը զիջանի Ամերիկայի պահանջած գումարը վճարել, որիչ Պետութիւններ ալ ձայն պիտի բարձրացնեն: Անգլիա 65,000 ոսկի կ'ուզէ իր հպատակներուն 1895-96ի կոտորածներու առթիւ կրած փնաններուն իբր փոխարինութիւն, Ֆրանսա 55,000 ոսկի, Իտալիա 15,000 ոսկի, Կատիկ պետութիւնները 10,000 ոսկի, եւ ասոնց վրայ բարգուեւելով Ամերիկայի 20,000 ոսկին, ընդ ամէնը 165,000 անգլիական ոսկիի գումար մը կը ներկայանայ: Մինչև հիմակ Ռուսիա միայն բացարձակօրէն ո՛ր է պահանջուած չըրաւ: Թիրբիոյ գանձը այս գումարը վճարելու շատ մեծ գծուարութեան մէջ պիտի գտնուի, բայց եթէ Մալիէն գատարի իսկ չըլլար, նորէն սուլթանը պիտի դժկամակէր վճարութեանը ընելու: Չուզէր որ գործնական կերպով հաստատուի կոտորածներուն մէջ իր պատասխանատուութիւնը, «թէև, կ'ըսէ Թայնզ, առաջին օրէն իսկ Պետութիւնները ապացուցած են թէ կոտորած ու թալան սուլթանին հրամանաւ կատարուեցան:»

Պետութիւններէն ոմանք սակայն տհաճութեամբ կը տեսնեն Միացեալ-Նահանգներու յանկարծական երևումը Եւրոպայի մէջ, ու գժրազարար իրենց համար, անկարող են ո՛ր է զիտողութիւն ներկայացնել ամերիկեան Հանրապետութեան, այնքան օրինաւոր են անոր պահանջումները: Եւ իրաւ ալ եթէ այս ծանր խնդիրը լուծելու հաշտարար ո՛ր է միջոց չգտնուի, և ամերիկեան նաւատորմը գործադրէ կառավարական սպառնալիքները հաւանական է որ Անգլիա ևս առիթէն օգտուի Ամերիկայէն տրուած օրինակին հետեւելու: Սրբաւարտի կ'ըսեն թղթակիցը քաղաքական շրջանակներու այս մտատանջութեանը թարգմանը կ'ըլլայ, իր թերթին զրկած ապրիլ 29 թուական հետագրով, որուն մէջ կ'ըսէ. «Տակաւին կարող չեմ հաւաստել ստուգութիւնը Ամերիկայէն հեռագրուած այն լուրին թէ՛ Դուրը հաւանած է անմիջապէս վճարել պահանջուած գումարը: Սակայն կարելի է մօտաւորապէս կարգադրութիւն մը հաւանական համարել, վասն զի ոչ միայն Թիրբիոյ հակառակ է նաւային ցոյցի մը, որ նախընթաց մը պիտի հաստատէ, այլ նաև որիչ Պետութիւններ ալ լրդովեալ են. նախ այն պատճառաւ որ Թիրբիոյ նկատմամբ Ամերիկայի ձեռք տանելիք գործնական միջոցներովը ահա Արևելեան խնդիրն մէջ նոր տարր մըն ալ կուգայ կը մտնէ: Ու յետոյ, ի հարկին Անգլիան ալ կրնայ այդպիսի օրինակի մը շատ զիրութեամբ և արդինաւորութեամբ հետեւիլ: Ուշագրութեան արժանի իրողութիւն մըն է որ ամէն անգամ երբ Անգլիա մտաբերեց նաւային ցոյց մը ընել Թիրբիոյ դէմ, միւս պետութիւնները անմիջապէս միջամտելով արդիւնքին այդպիսի խորհրդի մը գործադրութիւնը:»

Թայնզ խմբագրական յօդուածով մը հետեւեալ ուշադրաւ զիտողութիւնները կը ներկայացնէ: «Հիմակ Արևելեան խնդիրն մէջ նոր և զօրեղ միջամտող մըն ապէտք է հաշուի առնել. ու թէև Թիրբիա մերիկեան արդի միջադէպը ինքնին շատ ծանր խնդիր մը չէ, սակայն հաւանական չէ որ ապագային մէջ Թիրբիոյ խնդիրները «նկատողութեան առնուած պարագային կարելի ըլլայ) Ամերիկան բոլորովին մէկզի թողուլ: Իրողութիւնը այն է թէ այդ երկրին մէջ պաշտպանուելիք ամերիկեան շահեր կան: Օսմանեան քայքայեալ վարչութիւնը կանգուն պահելու միակ հնարաւորութիւնն է որ անիկա չընէ «այնպիսի տիւժարական փորձեր որպիսիք են մաքսատուրքերու բարձրացումը, կամ Միացեալ-Նահանգներու պահանջմանց մերժում: Սուլթանին ինքնասպան քաղաքականութիւնը ուշ կամ կանուխ իր անկումը առաջ պիտի բերէ եւ Թիրբիական ժառանգութեան հաշուէլ յարգարութիւնը: Եթէ Պետութիւնները համաձայնեալ կարող եղած ըլլային, Արևելեան խնդիրը արդէն շատոնց ի վեր լուծուած կ'ըլլար: Հայկական կոտորածներուն ատեն սակայն սուլթանին համար շատ տհաճելի յայտնութիւն մը եղաւ որ Պետութիւնները առաջ ունան պէս անհամաձայն չէին իրենց իրենց մէջ: Հիմակ ունան պտրագային ալ պետութիւնները համաձայնութեամբ կ'ընթանան այնպիսի խնդրի մը մէջ որուն առթիւ քանի մը տարի առաջ իրենց գուցէ անհնարին ըլլար համանման տեսակէտ մը ունենալ: Այս հանգամանքը կրնայ սուլթանին մտածելու նիւթ հայթայթել: Ինք այնքան տիւժար չէ որ երևակայէ թէ իր շահուն համար է որ արդի կացութիւնը կը պահպանուի: Այդ պահպանումին պատճառն է պարզապէս արդիւնք Պետութեանց միջեւ ծանր ընդդիմահարութիւն մը: Այս ընդհարումի պատահականութիւնը կը հեռանայ եթէ սուլթանը շարունակէ պետութիւնները իրարու կասկածելի ընել տալով իրարմէ բաժնելու ջանադիր քաղաքականութիւնը: Այս քաղաքականութիւնը էն ապահով միջոցն է գտնոնք միաբան պահելու համար:»

Թէ՛ ամերիկեան եւ թէ՛ եւրոպական այս միջադէպերը հաւանօրէն առանց ծանր տառնապի չեն անցնիր:



բակալեց քան մահմետական եւս «ամէնքն ալ, կ'ըսէ թայնդ, առաջնակարգ ընտանիքներու պատկանող, բարեկիրթ եւ ուսեալ երիտասարդներ, զորս լրտեսները մատնած էին իբր դժգոհներ:»

Սուլթանը այս զեպքերէն յուզուելով, Ելմտական նախարարին հրամայեց որ Ներքին գործերու նախարարութեան, ստիկանութեան, թնյանօթարանին յատկացուած զուժանները աւելցնեն. ու այս պաշտօնատուններն ալ լրտեսները բազմացնեն:

Տամատ Մահմուտ փաշա որ այլ եւս Երոպա հակասուլթանական կուսակցութեան պետը կը նկատուի, մեծ դեր մը խաղալու ձեռնարկած է: Այդ անձնաւորութիւնը իր քաղաքական դիրքովը, եւ Երլտըզի բոլոր զաղանիքներուն պաշարովը զոր համբարած հետն է բերած, իրաւամբ իր աներձագին ահեղագոյն թշնամին կը նկատուի: Սուլթանը որ էն պզտիկ Երիտասարգ թիւրքէն իսկ կ'ը վախնայ, տարակոյս չի կայ թէ այս օրինակ հեղինակութենէ մը սարսափահար կը մնայ, ուստի եւ ամէն միջոց ի գործ կը դնէ որպէս զի իր քեռայրը անգամ մը Պոլիս նետել տայ: Ինչպէս որ մեծ աւազակներուն զուլսը ի զին կը դրուի, նմանապէս Մահմուտ փաշային ալ վերագրածք աճուրդի հանուած է: Սուլթանը մեծ փոխարինութիւն խստացած է անոր որ իր քեռայրը Պոլիս վերագրցնէ, թէ և Դացարձակապէս չէ ըսուած «ողջ կամ մեռած», բայց ողջ առողջ վերագրածք մը աւելի հաճոյ պիտի ըլլար. մահուան խնդիրը Պոլիս կը կարգադրուի: Բարիդի օսմանեան դեսպան Միւնիւր պէյ որ ճարպիկութեան համբաւ կը վայելէ, Ժընէվ վազեց, բայց ինքնայօժար վտարանդիէն ընդունուելու արժանի չհամարուեցաւ. ու համարատուութեան համար Պոլիս կանչուեցաւ:

Սուլթանը տեսնելով որ անուշ լեզուով ալ պիտի չկըրայ օձը ծակէն հանել, նորէն սպառնալիքի դիմեց: Պիւլիզայի իր դեսպանը, Քարաթէնտորի էֆէնտի հրահանգ ստացաւ Ժընէվ երթալ, և ըմբոստ փաշային ազդարարել սր եթէ անմիջապէս Պոլիս չվերագրանայ երկու զաւկովը, ամենախիստ պատիժներ պիտի գործադրուին իրենց դէմ: Նախ եւ առաջ պիտի զրկուին իրենց բոլոր աստիճաններէն եւ պատիւներէն. յետոյ՝ իրենց բոլոր ստացուածքները յարքունիս պիտի գրաւուին. ու, ինչ որ ահեղագոյն է, պաշտօնական յայտարարութիւն մը ամբողջ օսմանեան կայսրութեան եւ համայն իսլամական աշխարհին պիտի հոչակէ թէ՛ Մահմուտ փաշա եւ իր երկու զաւակները ուրացեր են իրենց իսլամական կրօնքը: Այս սպառնալիքներուն Մահմուտ փաշա և զաւակները պատասխաներ են թէ իրենց Երոպայի մամուլին ու Երիտասարգ թիւրք կուսակցութեան թերթերուն մէջ յայտարարութիւն մը հրատարակելով կարող են սուտ հանել սուլթանին պաշտօնական յայտարարութիւնը թէ իրենց իսլամութիւնը ուրացի են:

Մինչ մէկ կողմէն սուլթանը Երոպայի մէջ այսօրինակ սպառնալիքներով կը ջանայ ահաբեկել իր թշնամին, միւս կողմէն ալ Պոլիս ճնշում կը բանեցնէ իր քրոջը վրայ զանիկա ամուսնալուծութեան պարտաւորելու: Սակայն

դեռ մինչեւ հիմայ Շէյխ-իւ-իսլամը ապահարգտնի համար հաւանութիւնը չէ տուած, առարկելով թէ սուլթանին առարկութիւնները անբաւական են այր և կին իրարմէ բաժնելու համար, մանաւանդ որ հանրմը ամուսնալուծութեան փափաքող չերեիր: Բայց հաւանական է որ սուլթանը իր փափաքին հասնի: Շէյխ-իւ-իսլամը իր տրամադրութեան ներքեւ է, ու եթէ հիմակուանը յամառի իր համոզման մէջ, սուլթանը դիւրագուն մէկը կը կոչէ այդ պաշտօնին, եւ անոր ձեռքովը իր քոյրը ամուսինէն կը բաժնէ: Բայց այսպիսի բռնարարութիւն մը հաւանօրէն շատ վտանգաւոր շարժում մը կրնայ առաջ բերել թէ սոփիստներուն և թէ կրօնական ու աշխարհական իշխանութեանց մէջ:

Այս բռնարարութեանց իբր պատասխան Մահմուտ փաշա Ժընէվէն ապրիլ 28ին հետեւեալ հեռագիրը զրկած է սուլթանին:

«Մահաշուք եւ սոսկալի պատահարները (խուզարկութիւն բնակարաններու, ձերբակալութիւններ, սպաննութիւններ) որոնք հիմակ Պոլիս տեղի կունենան, անգամ մը եւս կը կը հաստատեն թէ ձեր վեհափառութիւնը եւ ձեզի շրջապատողները ո՛ր եւ է կերպով տրամադիր չէք ճամբանիդ փոխելու: Ապօրէն և բռնապետական տիրապետութիւն մը մէկ հետեւանք կունենայ միայն, եւ այն ալ կատարելապէս արդարանալի: Յեղափոխութիւնը: Ժամանակակից պատմութեան մէջ համբաւաւոր երեք վեհապետ՝ Չարլս Ա, Լուի ԺԶ, ու Ալպիւլ-Ալիզ երեք նշանաւոր օրինակներ են թէ ինչ անխուսափելի վախճան կը սպասէ այն ինքնակալներուն որոնք պատմութեան դառն և հրահանգիչ դասերուն հակառակ, կը յամառին իրենց ընթացքը չփոխելու: Յաւօք կը տեսնեմ որ ձեր վեհափառութիւնը կը պատրաստուի պատմութեան այս զուլսը շորորդ օրինակով մը ճոխացնելու: Մենք սակայն ուրախ պիտի ըլլայինք ձեզի ցոյց տալ, երբ դեռ շատ ուշ չըլլայ, որ մեր ժամանակակիցները այդ վերջին օրինակին կրնան պէտք չունենալ:»

Աւշագրաւ իրողութիւն մըն է որ Մահմուտ փաշա Երոպա ժամանելուն առաջին օրերը երբ այնքան զգուշաւորութեամբ կը խօսէր, հիմակ բացէ ի բաց մահուան սպառնալիքը Երլտըզի գլխուն վրայ առկախ կը պահէ: Գլխատեալ երկու թագաւորներու, եւ երակահատ սպաննուած սուլթանի մը յիշատակները Համիտը խոտիկու սահմանուած են:

Մահմուտ փաշա գործօն Յեղափոխութեան նախապատրաստութիւնները կը տեսնէ: Կը կազմակերպէ Երիտասարգ թիւրքերուն կուսակցութիւնը, Ժընէվ իր ձեռքը կաննէ Օսմանլիին դէկը եւ այդ թերթէն 1,600 օրինակ Պոլիս կը զրկէ իբր ապահովագրեալ նամակ, ծանօթ թիւրքերու հասցէին: Քիչ օրէն ալ Լոնտոն պիտի գայ, ուր կ'երևի թէ տեսակցութիւն պիտի ունենայ Խտիվին հետ երբ այս վերջինը Յուցահանդէսին առթիւ Բարիդ երթալէն յետոյ Լոնտոն ալ այցելէ:

Այս միջոցին Ահմետ Ճէլալտտին փաշա հապճեպով Պոլսէն ճամբայ ելած է Ժընէվ երթալու համար, որպէս զի Մահմուտ փաշան համոզէ Պոլիս վերագրանալ:

ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

Բագմավիպի մայրեան պրակը անակնկալ մը կ'ըն-  
 ծայէ ընթերցող Հայոց. հոն կը վերերևի Հ. Ալիշան «Ար-  
 շալոյս Քրիստոնէութեան Հայոց» յօդուածով մը: Առա-  
 ջին տողերէն իսկ կը կարծենք Յռչիկներու մէկ զուլը կար-  
 դալ: Կը զգանք թէ Նահապետին սիրտը, միտքը ժամա-  
 նակին վրայէն զերթոյն սաւառնած են: Քառասունէն  
 աւելի տարիներ սահեր անցեր են առանց հպելու հաւա-  
 տացեալ խանգալաւ հողին: Իրեն համար գոյութիւն չեն  
 ունեցած Յայտնութեան, Աւանդութեան չհատացող պատ-  
 մական, իմաստասիրական, գիտական քննութիւնները  
 որոնք հայ մտքերը տարակոյտի տառապանքին կը մատ-  
 նեն, եւ բան մը, ու շատ մեծ բան մը, կը պակսեցնեն  
 Հայութենէն, ջանալով մեզի հատացնել թէ ինչ որ գա-  
 րէ ի գար մեր նախահաւերէն իրր աներկբայելի ճշմարտու-  
 թիւններ մեզի փոխանցուած են, կրնան նաև ստսութիւն  
 ալ համարուիլ. կամ աւելի շիտակը՝ տարակոյս չունին թէ  
 ստութիւն են: Հայաստանը Ալիշանի համար այն է ինչ որ  
 պատմութիւնը հոչակած է. «Օտար գիտունք և սգեաք ինչ-  
 պէս կ'ուզեն դատեն, վայել է մեզ ճանչնալ՝ աստուածա-  
 յին յատուկ նախախնամութիւն մի մեր սեփական հայ-  
 րենեաց վրայ, յառաջ քան շատ են թերևս ամենայն  
 ազգաց վրայ:» Հայաստան միշտ այն աշխարհն է ուր  
 մարդկութիւնը ճնունդ առաւ եւ Նոյի տապանը Արարա-  
 տի բարձունքը հանգչեցաւ: «Բագմաքննին եւ աւելի բազ-  
 մազրիչ գիտնականք ժամանակիս՝ ինչ ալ ճտոնն եւ ճա-  
 րեն ասոնց նկատմամբ, քանի որ Եփրատայ եւ Տիգրիսի  
 ափունքն՝ իրենց գիտակցօքն ի Հայոս են, և Արարատ հոն  
 կանգնի բարձրազուրիս ի միջի լեռանց արևմտեան Ասիոյ,  
 Հայն կրնայ միշտ մարդկութեան առաջին և երկրորդ  
 ծագման եւ աման կեդրոն ճանչնալ իրեն սեփականեալ  
 աշխարհը, եւ պարծիլ ոչ աշխարհական կամ ուսմական  
 պարծանօք, այլ իբրև կարևոր մասը աստուածածանօ-  
 թութեան և շնորհապարտութեան առ Աստուած, որ՝ այն-  
 քան բաժանեալ խառն ի խուռն եւ այնքան կտրատեալ  
 երկրի մասերէն, մեր յատուկ երկրի վրայ՝ կանխեր ցու-  
 ցեր է իր ազքնին կամացնչանը:»

Ինչպէս իր պատմական համոզումները նոյն եւ իր ե-  
 կեղեցական գաւանանքները բարձրաձայն հոչակելու շլա-  
 րանիւր Մեծ-Մերունին: Հ. Ալիշանի յօդուածը ուշադիր  
 կարդալով կ'անդրադառնանք թէ Քրիստոսի մտատիպարը  
 եղող այդ հեզուկ վարդապետը նաև գերազանցօքն անձ-  
 նալստաւ մըն է. «Փափուկ ժամանակի» պահանջումներուն  
 ո՛ր և է զոհողութիւն ընելու գաղափարին զէմ ըմբոստ մըն է.  
 ինչ որ կրօնական ճշմարտութիւն կը համարի զայն բարձ-  
 րաձայն կը հոչակէ առանց շրջահայեցութեան պէտք տես-  
 նելու: Այդ անփութութիւնը, ըսեմ արհամարհանքը, հո-  
 գեկան մեծկակ ուժի մը արտայայտութիւնն է. եւ ամէն

ուժ ամբարտաւան է, նոյն իսկ խոնարհութեան երեւոյ-  
 թին մէջ:

Հ. Ալիշանի այդ անայլալակ ու քաջակորով հաւատ-  
 քին ի տես, կ'ըմբռնենք թէ ինչպէս, կամ ինչու, ութսու-  
 նամենի ծերունին, նորածիլ երիտասարդի մը նման զեռ  
 տակաւին խանդավառ բորբոքեալ մը կը մնայ, քաջ առողջ  
 մտքով: Ո՛րքան ճշմարիտ է «հաւատք քո կեցուցին զքեզ»  
 յանձնարարականը:

\* \* \*

Բագմավիպի այդ պրակին գրական նորութիւնն է,  
 Պարոնեանի վրայ քննադատական ուսումնասիրութեան  
 մը երևումը, հանգուցեալ տաղանդաւոր երգիծաբանին  
 պատկերով հանդերձ: Յօդուածը թէև շարունակելի, բայց  
 հրատարակուած մասէն կը տեսնուի թէ քննադատը՝ Պ.  
 Պասմաճեան՝ Բատուայի համալսարանը ուսանող, Եւրո-  
 պայի հին եւ նոր գրականութեան հմուտ երիտասարդ մըն  
 է: Պ. Պասմաճեան թէև օգտուած է, ինչպէս ինքն ալ կը  
 յայտարարէ, Մալիկ հանդէսին մէջ Չօպանեանի 1895ին  
 միւնիոյն նիւթին վրայ գրած բազմակողմանի ու ծանրա-  
 կշիռ յօդուածէն, բայց նորանոր տեսութիւններ կը պար-  
 զէ, գիտական քննադատութեան ուղղութեամբ: Այդ յօ-  
 դուածը սր գրելու կարող միտք մը երեւան կը բերէ, կը  
 յուսադէ մեզի թէ հայ մատենագրութիւնը յանձին պ.  
 Պասմաճեանի պիտի կրնայ լրջախոհ զբազէտ մը եւս  
 ունենալ:

\* \* \*

Վիէնայի Հնախուզական Ընկերութիւնը Եփեոսի  
 պալատին մեծ դրան վրայ գտած է հին յունական ար-  
 ձանագրութիւն մը որ Աբգար Թագաւորին եւ Քրիստոսի  
 միջև փոխանակեալ թղթակցութեանց պատճէնն է: Տէյլի  
 Էքսքրէս հրատարակեց ճշգրիտ օրինակը այդ արձանա-  
 գրութեան, որ Եւսեպիոսի պատմութեան համանմանն  
 է: Այս նոր գիտին առթիւ անգլիական մամուլին մէջ  
 այդ նամակներուն վաւերականութեան թեր ու զէմ կար-  
 ծիքներու փոխանակութիւն կը կատարուի:

\* \* \*

Բօնսխոտքասիօն (Ընկերական ուսումնասիրութիւն-  
 ներ) վերնագրով և Արմենա (Արմենուհի) ծածկանուան ներ-  
 քև Ֆրանսերէն հատոր մը հրատարակուեցաւ այս օրերս  
 Ֆիօրէնցա: Այդ գիրքը կը խօսի Հայոց գրած տառա-  
 պանքներուն վրայ մասնաւորապէս: Կերեի թէ հայ օրիորդի  
 մը այս գործը ջերմ ընդունելութիւն պիտի գտնէ Եւրոպա-  
 յէն: Նոչվէլ Ռըվիէ հանդէսին քաղաքական խմբագիրը,  
 տիկին Ատան «արտակարգ և հրաշալի» գիրք մը կը հըռ-  
 շակէ զայն: Աւելի ընդարձակօքն խօսելու առիթը կ'ու-  
 նենանք:

Հ

### ԼՈՒՐԵՐ

**ՍՐԿԱՅԼԻ ԴՈՒՔՍԻՆ** մահը ծանոցանելու խորին ցաւը ունենալով: Սկովտիացի մեծանուն շոտլանդացի 24 ին գիշերը վախճանեցաւ Արկայլի, Ինվերբրի դըղեակին մէջ, 77 տարեկան: Հանգոցեալը մեծ միտք մըն էր, և մեծագոյն ալ սիրտ մը, որուն հասաստիքը շաւղեց միշտ ախոյեան հանդիսանալով Թիւրքիոյ դժբաղդ քրիստոնեաներուն դատին: Իր առողջութիւնը քիչ շատ խարխուղ էր 1895 ին, բայց եկաւ նախագահեց Սէնթ-Ճէյմս գոմարտած մեծ միթինկին, որուն նպատակն էր Անգլիոյ ազգային բողոքի մալը բարձրացնել ընդդէմ րիւթքական բարբարոսութեան, եւ ի նպաստ հայկական դատին:

Երկու տարուան ժամանակամիջոցին մէջ այսպէս ահա դժբաղդութիւն կուսնենալը կորսնցնել մեր դատին ամենաչեղ քերք պաշտպանները՝ Կլատսոն, Ռէս, միւսրի դոքսը, Արկայլի դոքսը: Բայց կը հաստատուի քիչ քրիստոնեայ աշխարհը պիտի գործադրէ ասոնց քուած կտակը:

**ՕՐԹՈՏՈՒՔՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ.** Պերիսեն կը հաղորդուի քիչ տու կառավարութիւնը մտադիր է մօտերս Օրթոտոքս կրօնաշորներ զրկել Փոքր-Ասիա, և րպատակ ունենալով Հայաստան եւ Բիւրտանաստան միւսնուարական հաստատութիւններ հիմնել: Ռուսիա Փոքր Ասիոյ մէջ իր վաճառականութեան ու երկարողիներուն քաղաքականութեանը կցելով եւ կրօնական տարածումն ալ կը յռայ մեծ օգուտներ քաղել: Այդ միսիոնարները պիտի կրնան համակրայիր միտքիւն հաստատել Արեւելեան Եկեղեցիին զանազան ձիւղերուն և Օրթոտոքսութեան միջև: Այր տեսալ առաքելութիւնները արդեն մեծապէս նպաստած են ու կը նպաստեն Պոզիս, րիա, Վրաստան, Հայեշիստան եւ հիւսիսային Պարսկաստան Ռուսիոյ քաղաքականութեան:

**ՕՐՄՈՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԻՒՆ** Ռուսիոյ կայսեր դիւանը քրած ըլլալու յոչրը գոր Սթանաարա հաղորդած էր, կը հերքուի Ռիւթերի հեռագրէ մը:

**ՓԱԽՈՒՍՏ.** Պոլսէն Տէյլի Բրոնիկի կը հաղորդեն քի Տրիպոլիս բանտարկուած 65 քաղաքական յանցաւոր բանտին կառավարիչն ալ մեկտեղ առնելով րիսիւնք են:

**ԵՐԻՏՐԱՍՏՐԻ ԹԻՒՐԻԵՐԸ.** Կ. պոլսէն ապրիլ 30 քուականով կը հեռագրեն քի 32 երիտասարդ րիւթք, որոնք ձերբակալուած էին իրր դժգոհներ, արտորուտք են ներքին նահանգները: Ասոնց չէ քոյլարուած ո՛ր և է բան մը առնել հետերնին, եւ ոչ իսկ ներուած է իրենց վերջին անգամ ըլլալով գոնէ ծնողներնին տեսնել:

Իստայլ Բեմալ պէյ, անգլիստեր րիւթքը որ Ափրիկեան Տրիպոլի կուսակալ անուանուած էր, ինչ չոր

գործնականապէս արտորի դատապարտութիւն կը նշանակէ, յաջողք է անգլիական շոքեան մը ապաստանիլ ու անգլիական դեսպանին պաշտպանութիւնը վայելելով Եւրոպա անցնիլ: Սոչրանք այս րիստոնեան ալ շատ վրդովեր է: Երիտասարդ Թիւրքերուն կազմակերպութիւնը սկսած է յրջանալ:

**ՔՐԻՍՏՈՒՔՍՈՒ ՊԱԼԵՍՆ.** Լոնտոնի Քաղաքային Խորհրդին անդամ Քրիստափոր Պալեանի գողութեան և րիստոնեան առթիւ՝ անգլիական բողոք րերրերը նոյն վերապահուտը չունեցան անոր ազգայնութեան մասին: Շատ տարածուած րերը մը, Իֆինիկ Նիուզ, սա տեսնելի տողերը հրատարակեց այդ առթիւ:

«Կ'իմանալ քի Պ. Պալեան ծննդեամբ Հայ մըն է, րեպէտ անշուշտ անգլիական քաղաքացիութիւն և հպատակութիւն ընդունած: Կ'ըսուի քի Հրեայ մը կրնայ էր. կու Անգլիացի «գետիկը զարնել», Յոյն մը՝ երկու Հրեայ, և Հայ մը՝ երկու Յոյն: Բայց չեմ գիտեր անշուշտ քի Պ. Պալեան կ'արդարացնէ՞ր այս առածը:»

Պատկերագրող օրաքերը, Տէյլի Կրաֆիք, րիստոնեան կեղծանագիրը հրատարակեց՝ դիւրացնելու համար ուսիկանութեան րիւստոնքը: Պլաք Էնս Հուայդ պատկերագրող շարաքերըն ալ այդ տխուր պատիւը քրուս անհետացած գողին:

Անգլիական րերրի մը նայելով, Պալեան կրցեր է 2700 ոսկի առնել՝ իր գրած դրած մարգրիտներուն վրայ:

**ՍՈՒԼԹԱՆԸ** իրատէ մը հաներ է, նախարարներուն խորհրդին հրաման տալով միջոց մը գտնելու Թիւրքիոյ մէջ գտնուած օտար նամակատուները ընդելու, աւելցնելով որ երբ ատիկա անկարելի ըլլայ, նախարարները գոնէ միջոցներ ձեռք առնելու են որ օտանեան հպատակները այդ նամակատուներուն չդիմեն, ծանր պատիժներ սահմանելով անոնց որ անաստեն այս տրււորիւնութեան:

### ՀԱՍՏԵ ՈՒ ԲԱԺՆԵՂԻՆ

**ՆՈՐ ԿԵԱՆՔԸ** կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15 ին: Բաժնեղինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար:

**ՆՈՐ ԿԵԱՆՔԻ** վերաբերեալ նամակ ու բաժնեղին յրկիւն ա՛ն՝

L. FRANK,  
27, CHESTERTON ROAD,  
(ENGLAND) LONDON, W.